ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆԻՉ ՊԱԼԱՏ

ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄՈՒՏՔԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԵԼՔԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2020

Հաշվեքննության հիմքը	ՀՀ հաշվեքննիչ պալատի 2019 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 22/6, դեկտեմբերի 04-ի թիվ 26/2 և 2020 թվականի հունվարի 22-ի թիվ 5/Ա որոշումներ:
Հաշվեքննության օբյեկտը	ՀՀ Սյունիքի մարզպետարան:
Հաշվեքննության առարկան	2017 և 2018 թվականների ՀՀ Սյունիքի մարզպետարանի կողմից պետական բյուջեի մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն:
Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	2017 թվականի հունվարի 1–ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31–ը:
Հաշվեքննության կատարման ժամկետը	2019 թվականի հոկտեմբերի 21–ից մինչև 2019 թվականի փետրվարի 27-ը ներառյալ (զննման և դիտարկման համար ժամկետ՝ 2019 թվականի նոյեմբերի 04-ից դեկտեմբերի 23-ը):
Հաշվեքննության մեթոդաբանությունը	Իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն: Հաշվեքննության ընթացքում կիրառվել են զննում, դիտարկում, հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ ընթացակարգերը:
Հաշվեքննություն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանում	Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի չորրորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է Հաշվեքննիչ պալատի անդամ Գագիկ Ոսկանյանը:

ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔ

Մենք հաշվեքննության ենք ենթարկել ՀՀ Սյունիքի մարզպետարանի (այսուհետ՝ Մարզպետարան) կողմից 2017 և 2018 թվականների պետական բյուջեի մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեությունը (այսուհետ՝ Գործունեություն) և Մարզպետարանի կողմից ծրագրերի կատարման համապատասխանությունն ՀՀ օրենքներին և այլ իրավական ակտերին, ինչպես նաև քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակներում կնքված այլ գործարքներով սահմանված չափանիշներին և պահանջներին:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Մարզպետարանի ղեկավարությունը պատասխանատվություն է կրում ֆինանսական հաշվետվության պատրաստման և ճշմարիտ ներկայացման համար՝ համաձայն 2015 թվականի ապրիլի 1-ի թիվ 176-Ն ՀՀ ֆինանսների նախարարի հրամանի:

Մարզպետարանի ղեկավարությունը պատասխանատվություն է կրում ծրագրերի կատարումն իրականացնել ՀՀ օրենքներին և այլ իրավական ակտերին, ինչպես նաև քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակներում կնքված այլ գործարքներով սահմանված չափանիշներին և պահանջներին համապատասխան:

Ղեկավարությունը պատասխանատու է նաև այնպիսի ներքին հսկողության համակարգի համար, որը, ղեկավարության կարծիքով, թույլ կտա պատրաստել սխալների կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից և/կամ անհամապատասխանություններից զերծ ֆինանսական հաշվետվություն:

Հաշվեքննողի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է անցկացված հաշվեքննության արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվության վերաբերյալ: Մենք հաշվեքննությունն անցկացրեցինք Հաշվեքննիչ պալատի մասին ՀՀ օրենքի համաձայն՝ առաջնորդվելով Աուդիտի բարձրագույն մարմինների միջազգային կազմակերպության ստանդարտներով, որոնց մեթոդաբանությունները պահանջվում են, որ մենք հետևենք վարքագծի սկզբունքների պահանջներին և հաշվեքննությունը պլանավորենք և իրականացնենք այնպես, որպեսզի ձեռք բերենք ողջամիտ երաշխիք, որ ֆինանսական հաշվետվությունը զերծ է էական խեղաթյուրումներից և ծրագրերի կատարումը զերծ է էական անհամապատասխանություններից:

Հաշվեքննության աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվությունում արտացոլված տեղեկատվության վերաբերյալ հաշվեքննության ապացույցի ձեռքբերում: Հաշվեքննության ընթացակարգերի ընտրությունը կախված է հաշվեքննողի դատողությունից, ներառյալ՝ խարդախության կամ սխալի կամ անհամապատասխանության հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման և Մարզպետարանիկողմից ծրագրերի կատարման էական անհամապատասխանության ռիսկերի գնահատումից:

Ռիսկերի նման գնահատում իրականացնելիս հաշվեքննողը դիտարկում է ներքին հսկողության համակարգը՝ կապված ֆինանսական հաշվետվության պատրաստման, ճշմարիտ ներկայացման և ծրագրերի իրականացման հետ՝ կազմելուտվյալ հանգամանքներին համապատասխան հաշվեքննության ընթացակարգեր, սակայն ոչ ներքին հսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով: Հաշվեքննության աշխատանքները ներառում են նաև ֆինանսական հաշվետվության պատրաստման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների տեղին լինելու, ղեկավարության կողմից կատարված հաշվապահական հաշվառմանգնահատումների խելամտության, ինչպես նաև ֆինանսական հաշվետվության ամբողջական ներկայացման գնահատումը:

Մենք գտնում ենք, որ ձեռք ենք բերել բավարար ապացույցներ՝ համապատասխանության հաշվեքննության մեր կարծիքը հիմնավորելու համար:

Համապատասխանության հաշվեքննություն՝ «Բացասական եզրահանգման հիմք»

Մեր կարծիքով բացասական եզրահանգման հիմք է հանդիսացել սույն եզրակացության թիվ 1–ից 4-րդ, 6-ից 8-րդ, 10-ից 12-րդ գլուխներում նկարագրված հարցերի նշանակալիության հետևանքով, Մարզպետարանի կողմից ծրագրերի կատարումը չի համապատասխանում ՀՀ օրենքներին և այլ իրավական ակտերին, որն իր ազդեցությունն ունի ֆինանսական հաշվետվության վերաբերյալ կարծիքի վրա:

Ֆինանսական հաշվեքննություն՝«Ոչ լիարժեք եզրահանգման հիմք»

Ոչ լիարժեք եզրահանգման հիմք է հանդիսացել սույն եզրակացության թիվ 1–ից 13 գլուխներում ներկայացված հարցերի նշանակալիությունը, ինչի հետևանքով հայտնաբերված էական խեղաթյուրումների հետևանքները համատարած չեն, ինչպես նաև՝ անհնար է ստանալ բավարար տեղեկատվություն հաշվեքննություն իրականացնելու համար:

Համապատասխանության հաշվեքննություն՝ բացասական եզրահանգում

Մեր կարծիքով «Բացասական եզրահանգման հիմք» պարագրաֆում նկարագրված հարցերի նշանակալիության հետևանքով, Մարզպետարանի կողմից ծրագրերի կատարումը չի համապատասխանում ՀՀ օրենքներին և այլ իրավական ակտերին, ինչպես նաև քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակներում կնքված այլ գործարքներով սահմանված չափանիշներին և պահանջներին:

Ֆինանսական հաշվեքննություն՝ ոչ լիարժեք եզրահանգում

Մեր կարծիքով ֆինանսական հաշվետվությունը բոլոր էական առումներով խեղաթյուրված չէ, բացառությամբ «Ոչ լիարժեք եզրահանգման հիմք» պարագրաֆում ներկայացված հարցերի:

Գ. Ոսկանյան՝
ՀՀ Հաշվեքննիչ պալատի անդամ
«28» փետրվարի 2020 թվական
ՀՀ հաշվեքննիչ պալատ
Բաղրամյան 19 փողոց, ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն

ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՄ ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐ

1. Մարզպետարանում և նրա ենթակայության կազմակերպություններում հանրային հատվածի հաշվապահական հաշվառման իրականացման վերաբերյալ

Անհամապատասխանություններ կամ խեղաթյուրումներ

Մարզպետարանում և նրա ենթակայության ՊՈԱԿ-ներում հաշվապահական հաշվառումը չի իրականացվում ավտոմատացված համակարգերով և հաշվապահական ստանդարտներով:

1.1 Մարզպետարանի, նրա ենթակայության պետական ոչ առևտրային կազմակերպությունների կողմից ձեռք են բերվել հաշվապահական հաշվառման ավտոմատացված համակարգեր, սակայն 2018 թվականից հաշվապահական հաշվառման վարումը չեն իրականացրել հաշվապահական ավտոմատացված համակարգի միջոցով: Մարզպետարանի կողմից հաշվապահական հաշվառումը հաշվապահական ավտոմատացված համակարգի՝ ծրագրային ապահովման միջոցով իրականացման աշխատանքները մեկնարկել են 2019 թվականին և մինչև հաշվեքննության ավարտը դեռ ավարտված չեն եղել: Հաշվեքննության ընթացքում պարզվեց, որ Մարզպետարանի հաշվապահական հաշվառումը չի իրականացնում հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտներով: Առկա է անհամապատասխանություն Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարի 2014թ. հուլիսի 23-ի Հանրային հատվածի կազմակերպությունների կողմից հաշվապահական հաշվառման նոր համակարգին անցման ժամանակացույցը հաստատելու մասին թիվ 463-Ն հրամանի հավելվածով սահմանված ժամկետների ու պահանջների հետ:

1.2 Հաշվեքննության ընթացքում պարզվեց, որ 2017-2018թթ.-ին Մարզպետարանի ենթակայության մարզադպրոցները ֆինանսատնտեսական գործունեության հաշվապահական հաշվառման վարման գործընթացում չեն առաջնորդվել օրենքով սահմանված անալիտիկ (վերլուծական) հաշվառման և սինթետիկ (ընդհանրացված) հաշիվների տվյալների համապատասխանության, ֆինանսական հաշվետվությունների պատրաստման հաշվեգրման հիմունքներով, ինչպես նաև գործառնությունների, այլ դեպքերի և իրադարձությունների գրանցամատյաններում գրանցման ժամանակագրական կարգով, չեն ընդունել և չեն սահմանել պարտադիր կիրառման ենթակա չեն ընդունել պարտադիր կիրառման ենթակա կամ սահմանել գրանցամատյանների օրինակելի ձևերը: Առկա է անհամապատասխանություն Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման մասին ՀՀ օրենքի 10-րդ, 12-րդ հոդվածներում, ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարի 2016թ. փետրվարի 1-ի Հանրային հատվածի կազմակերպությունների սկզբնական հաշվապահական հաշվառման փաստաթղթերի և հաշվապահական հաշվառման

գրանցամատյանների օրինակելի ձևերը սահմանելու մասին թիվ 37-Ն հրամանի հավելվածով սահմանված պահանջներում:

1.3 Սիսիանի մարզադպրոց ՊՈԱԿ-ը հիմնական միջոցներ շարժը չի վարվել ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2000-ի հունիսի 12-ի Հիմնական միջոցների և տեղակայման ենթակա սարքավորումների սկզբնական հաշվառման փաստաթղթերի և գրանցամատյանների օրինակելի ձևերը և լրացման ցուցումները հաստատելու մասին թիվ 104 – ա հրամանով սահմանված կանոնակարգերին և ձևերին համապատասխան:

1.4 «Գորիսի բժշկական կենտրոն» և «Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ները տարեկան ֆինանսատնտեսական գործունեության հաշվառումը վարելիս առկա են անհամապատասխանություններ հաշվետու տարվա և միջանկյալ հաշվետու ժամանակաշրջանի օրենսդրական պահանջներում, որոնք ամրագրված են «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 24 հոդվածի 1-ին մասում:

Առաջարկել Մարզպետարանին անցում կատարել հաշվապահական հաշվառման նոր համակարգին, պահպանել «Հաշվապահական հաշվառման մասին», «Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքների, հաշվապահական հաշվառման ստանդարտների և այլ իրավական ակտերի պահանջները և ժամկետները:

2. Մարզպետարանի և նրա ենթակայության կազմակերպությունների, առողջապահական և բժշկական ընկերությունների կողմից աշխատողների աշխատավարձերի և հավելավճարների գծով կատարված ծախսերի վերաբերյալ

Անհամապատասխանություններ կամ խեղաթյուրումներ

2.1 Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում ծրագրի շրջանակում կատարված (411100) «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» հոդվածի հաշվեքննության ընթացքում Սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգով (այսուհետ՝ ՍԷԿՏ համակարգ) հաշվետախտակների (տաբելներ) և աշխատավարձերի հաշվարկա-վճարային փաստաթղթերի միջև համադրումներից, վերակատարումներից և ուսումնասիրություններից պարզվեց, որ Մարզպետարանի աշխատակազմի թվով 4 աշխատակիցներ 24 աշխատանքային օրեր գտնվել են արտերկրում, սակայն նրանց ներկայությունը ամրագրված է հաշվետախտակներում (տաբելներ), ինչի հետևանքով վերջիններիս հաշվարկվել և վճարվել է 401,377,0 ՀՀ դրամ աշխատավարձ:

2.2 Սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգով (ՍԷԿՏ) աշխատակիցների հաշվետախտակների (տաբելներ) և աշխատավարձերի հաշվարկա-վճարային փաստաթղթերի միջև համադրումներից, վերակատարումներից և ուսումնասիրություններից պարզվեց, որ թվով 16 հանրակրթական դպրոցներում 43 աշխատակիցներ 2017-2018թթ.-ներին 862 աշխատանքային օրեր գտնվել են արտերկրում, վերջիններիս ներկայությունը ամրագրված է հաշվետախտակներում, հաշվարկվել և վճարվել են աշխատավարձեր ընդամենը՝ 3.919.240,0 ՀՀ դրամ, որից հաշվեքննության ընթացքում մարզի հանրակրթական դպրոցների կողմից վերականգնվել է 3.086.754,0 դրամը:

2.3 Իրականացված հաշվեքննության շրջանակում ՀՀ Սյունիքի մարզի առողջապահական և բժշկական ընկերությունների (411100) «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» հոդվածի հաշվեքննության ընթացքում ՍԷԿՏ համակարգով կատարված հաշվետախտակների (տաբելներ) և աշխատավարձերի հաշվարկա-վճարային փաստաթղթերի միջև համադրումներից, վերակատարումներից և ուսումնասիրություններից պարզվեց, որ ՀՀ Սյունիքի մարզի առողջապահական և բժշկական թվով 4 կազմակերպությունների թվով 43 աշխատակիցներ 198 աշխատանքային օրեր (հերթափոխեր) գտնվել են արտերկրում, սակայն նրանց ներկայությունները ամրագրված են հաշվետախտակներում (տաբելներ), ինչի հետևանքով վերջիններիս հաշվարկվել և վճարվել է 1.146.204,0 ՀՀ դրամ աշխատավարձ:

2.4 Արտադպրոցական կրթության շրջանակում կատարված (411100) «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» հոդվածի հաշվեքննության ընթացքում ՍԷԿՏ համակարգով հաշվետախտակների (տաբելներ) և աշխատավարձերի հաշվարկա-վճարային փաստաթղթերի միջև համադրումներից, վերակատարումներից և ուսումնասիրություններից պարզվեց, որ Մարզպետարանի ենթակայության թվով 2 մարզադպրոցների թվով 2 աշխատակիցներ 73 աշխատանքային օրեր գտնվել են արտերկրում, սակայն նրանց ներկայությունները ամրագրված են հաշվետախտակներում (տաբելներ), ինչի հետևանքով վերջիններիս հաշվարկվել և վճարվել է 223.579,0 ՀՀ դրամ աշխատավարձ:

Մարզպետարանի և նրա ենթակայության 23 հիմնարկների 92 աշխատակիցներ 2017-2018 թթ.-ին 1157 աշխատանքային օրեր գտնվելել են արտերկրում և ստացել են աշխատավարձ 5.690.400 ՀՀ դրամ:

Աղյուսակ 1

Թիվ	Օբյեկտներ	Օբյեկտների քանակը	Աշխատա-կիցների թիվը	Օրերի (և / կամ հերթափոխերի) քանակը	Գումարը (ՀՀ դրամ)
1	Մարզպետարանի աշխատակազմ	1	4	24	401,377.0
2	Հանրակրթական դպրոցներ	16	43	862	3,919,240.0
3	Բժշկական և առողջապահական ընկերություններ	4	43	198	1,146,204.0
4	Մարզադպրոցներ	2	2	73	223,579.0
	Ընդամենը	23	92	1157	5,690,400.0

Հաշվեքննության ընթացքում մարզի հանրակրթական դպրոցների կողմից վերականգնվել է 3.086.754,0 ՀՀ դրամ:

Առաջարկել Մարզպետարանին խստացնել հսկողությունը աշխատակիցների ամենօրյա հաճախումների մատյանների գրանցումների, ստորագրությունների, ամսեկան հաշվետախտակների լրացման, վավերացման և հաշվարկա-վճարային փաստաթղթերի ձևակերպումների վրա:

3. Մարզպետարանի կողմից կատարված տրանսպորտային նյութերի գծով ծախսեր

Անհամապատասխանություն կամ խեղաթյուրում

Մարզպետարանի աշխատակազմում ավտոմեքենաների վառելիքի ծախսի նորմատիվները անհամապատասխան են՝ 997.924,0 դրամով, չեն սահմանված նոր մոդելի մեքենաների ծախսի ժամանակավոր նորմաները:

3.1 Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում՝ ծրագրի շրջանակում կատարված (426400) «Տրանսպորտային նյութեր» հոդվածի հաշվեքննությամբ պարզվել է, որ Մարզպետարանի ավտոմեքենաների վառելիքի ելքի երթուղային բոլոր թերթիկներում չեն նշվում սկզբնական և վերջնական վազքի ցուցիչի ցուցմունքները, արձանագրված չեն մեքենաների վառելիքի տարաների մնացորդը, տնտեսումը կամ գերածախսը, հիմնավորված չեն բենզինի ծախսի նորմատիվները, որի արդյունքում ստացված

տվյալների և Մարզպետարանի հաշվարկված ծախսերի միջև տարբերությունը 2017թ.-ին կազմել է 557.257,0 դրամ, իսկ 2018թ.-ին՝ 440.667.0 դրամ (ընդամենը՝ 997.924,0 դրամ): Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 2005 թվականի հուլիսի 1-ի «ՀՀ պետական մարմինների ծառայողական ավտոմեքենաների և մոտոտրանսպորտի, յուղերի ու քսուկների ծախսի, ավտոդողերի և կուտակչային մարտկոցների ծառայության ժամկետների նորմաները սահմանելու մասին» թիվ 1001–Ն որոշման Հավելվածի 1-ի «զ» կետի երկրորդ պարբերությամբ սահմանված պահանջում, այն է՝«Սույն աղյուսակում չընդգրկված և նոր մոդելի ու մոդիֆիկացիայի ավտոմեքենաների և մոտոցիկլետների համար կարող են սահմանվել վառելիքի ծախսի ժամանակավոր նորմաներ՝ մեկ տարի ժամկետով»: Միաժամանակ, Մարզպետարանը պետք է կանոնակարգի ցանկում չընդգրկված ավտոմեքենաների մասով վառելիքի ծախսի նորմատիվները:

***Առաջարկել** Մարզպետարանին խստացնել հսկողությունը վառելիքի ծախսերը հիմնավորող փաստաթղթերի նկատմամբ:*

4. Մարզպետարանի կողմից «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածի վերաբերյալ

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում ծրագրի շրջանակում կատարված Այլ նպաստներ բյուջեից» (472900) հոդվածի հաշվեքննությամբ պարզվել է, որ մարզպետի 2017թ.-ին համապատասխան որոշումներով թվով 786 քաղաքացիների տրվել են 30.000,0 հազար դրամ գումարի, իսկ իսկ 2018թ.-ին՝ թվով 801 քաղաքացիների տրվել են 29.026,0 հազար դրամ գումար դրամական օգնություններ, (ընդամենը՝ 1587 քաղաքացիներին տրամադրվել է 59,026.0 հազար դրամ), 2017-2018թթ.-ներին Մարզպետարանի կողմից մերժվել են 1326 դիմումներ (Հիմք՝ Մարզպետարանի աշխատակազմի գլխավոր քարտուղարի տեղակալի 15.11.2019թ.-ի թիվ 06/07147-19 գրությունը): Ամբողջ գումարը փոխանցվել է Արդշինբանկ» ՓԲԸ-ի տարանցիկ հաշվին, որով բանկը շահառուներին կանխիկ տրամադրել է օգնությունները:

Անհամապատասխանություններ կամ խեղաթյուրումներ

4.1 Մարզպետարանի և Արդշինբանկ» ՓԲԸ-ի միջև բացակայում է Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով միջոցների տրամադրման ծառայությունների մատուցման պայմանագիրը, ինչպես նաև՝ բանկ ուղարկված վճարման ցուցակների և բանկի կողմից փաստացի վճարված գումարների մասին քաղվածքները: Արդյունքում բացակայում է վերահսկողությունը վճարված գումարների նկատմամբ:

Մարզպետարանում բացակայում է դրամական օգնությունները տրամադրելու համապատասխան հրամանով հաստատված կանոնակարգ, որի հետևանքով արձանագրվում են անհամապատասխանություններ:

4.2 Մարզպետարանում բացակայում է դրամական օգնությունները տրամադրելու համապատասխան հրամանով հաստատված կանոնակարգ: Մարզպետի հրամանով ստեղծված հանձնաժողովը ոչ բոլոր դիմումներն է ուսումնասիրում և պատշաճ հետազոտում պահանջվող փաստաթղթերը: Այս հանգամանքով պայմանավորված.

- *Առկա են թվով 7 դեպքեր, երբ շահառուն դիմել է դրամական կարիքի հետ բովանդակային կապ չունեցող խնդրով և վերջինիս տրամադրվել է ֆինանսական օգնություն:*
- *Մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության կողմից առանց անհատական դիմումների կազմվում են ցուցակներ, ներկայացվում են մարզպետին և հրամանով ցուցակում ընդգրկված անձիք ստանում են օգնություններ:*
- *Կատարվել է համադրություն ՀՀ Պետական եկամուտների կոմիտեի (ՊԵԿ) կողմից Մարզպետարանի 2017-2018թթ. աշխատակիցների ցուցակների հետ: Համադրությամբ պարզվեց, որ վճարված 1560 դրամական օգնությունների դեպքերից 37-ը՝ վճարվել է Մարզպետարանի աշխատակիցների գրանցման թվով 29 հասցեներում՝ 1,878,0 հազար դրամ ընդհանուր գումարով:*
- *Ստեղծված տեղեկատվական բազան ներառում է Մարզպետարանի կողմից տրամադրված թվով 1560 վճարված նպաստների դրամական օգնությունները (58.056,0 հազար դրամ), իսկ 25 անձիք (27 ստացված դրամական օգնություններ) չեն նույնականացվել (970,0 հազար դրամ):*
- *2017-2018թթ.-ներին վճարված 1560 դրամական օգնությունների դեպքերից 679-ը տրամադրվել են 294 հասցեներում հաշվառված 378 անձանց: Նշված 294 հասցեներում տրամադրվել են օգնություններ երկու և ավելի անգամներ, որը կազմում է տրամադրված ամբողջ գումարի 38.1%-ը, ընդհանուր օգնության դեպքերի 44.0 %-ը կամ 22,479,0 հազար դրամ:*
- *Դրամական օգնությունների բաշխվածությունը խիստ կենտրոնացված է մարզկենտրոնում և Կապանի համայնքապետարանի բնակավայրերում: 2017-2018 թթ.-ներին վճարված 1560 դրամական օգնությունների դեպքերից 1186-ը (76.0 %) վճարվել է Կապանի տարածաշրջանի հասցեներում հաշվառված անձանց՝ որը կազմում է 41,176,0 հազար դրամ:*
- *2017-2018թթ.-ներին վճարված 1560 դրամական օգնությունների դեպքերից թվով 37 դեպքերում վճարումը կատարված է ՀՀ Սյունիքի մարզում հաշվառում չունեցող անձանց, ընդհանուր՝ 1,475,0 հազար դրամ գումարով:*

Առաջարկել *Մարզպետարանին, կամայականությունները բացառելու նպատակով, կանոնակարգել «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով դրամական օգնությունների տրամադրման համակարգը: Հնարավորություն ընձեռնել մարզի թվով 4 սոցիալական աջակցության տարածքային գրասենյակներին (ՍԱՏԳ) առանձնահատուկ և հրատապ դեպքերում քաղաքացիներից դրամական օգնությունների դիմումներ ընդունել ծառայությունում՝ կցելով իրավիճակի մասին ուսումնասիրության արձանագրություններն ու առաջարկները: Ստեղծել նաև Մարզի համայնքապետարաններում (խոշորացված համայնքներում) առանձնահատուկ և հրատապ դեպքերում քաղաքացիներից դրամական օգնությունների դիմումներ ընդունելու, փաստագրելու, միասնական տեղեկատվական համակարգում ներառելու և առաջարկություններ ներկայացնելու լրացուցիչ հնարավորություններ:*

5. Մարզպետարանի կողմից կատարված կապի ծառայությունների գծով ծախսեր

Անհամապատասխանություն կամ խեղաթյուրում

5.1 Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում ծրագրի շրջանակում կատարված Կապի ծառայություններ» (421400) հոդվածի հաշվեքննությամբ պարզվել է, որ 2017 թվականի հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին Յուքոմ» ՍՊԸ-ի կողմից Մարզպետարանին մատուցված ծառայությունների դիմաց հեռախոսներիի վարձավճարների գծով փոխանցված գումարները կտրուկ ավելացել են՝ ամսական միջինը 115,0 հազար դրամից դառնալով 1.457,0 հազար դրամ: Մարզպետարանին մատուցված լրացուցիչ ծառայության վերաբերյալ ընդունման ակտ չի կազմվել, հարկային հաշիվների վրա բացակայում է ստացողի էլեկտրոնային ստորագրությունը, հնարավոր չէ որոշել փոխանցված գումարի համապատասխանությունը մատուցված ծառայությունը (առկա է Մարզպետարանի գլխավոր քարտուղարի տեղակալի կողմից տրամադրված համապատասխան տեղեկանքը): Կապի ծառայության հիշատակված ծախսը հիմնավորող փաստաթղթերի ոչ պատշաճ լրացումը, չմատուցված ծառայությունների դիմաց 2.914,0 հազար դրամ գումարի փոխանցումը թույլ հսկողության գործընթացների արդյունք է, որը հանգեցրել է ծախսի խեղաթյուրման և պարունակել խարդախության ռիսկ:

Մարզպետարանը 2017թ.-ին չմատուցված ծառայությունների դիմաց 2.914,0 հազար դրամ փոխանցել է Յուքոմ» ՍՊԸ-ին:

Առաջարկել *Մարզպետարանի աշխատակազմին չմատուցված ծառայությունների դիմաց 2.914,0 հազար դրամի ծախսից, հեռախոսների ամսավճարների վերահաշվարկ կատարելուց հետո, տարբերությունը հետգանձել ՀՀ պետական բյուջե:*

6. Մարզպետարանի կողմից «Մարզային նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանում, ընթացիկ պահպանում և շահագործում» ծրագրի կատարման վերաբերյալ

Մարզպետարանը մարզային նշանակության ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման մարզային ավտոճանապարհների սպասարկման հաշվարկները ոլորտում կատարել են ոչ թե ճանապարհահատվածի ամբողջ ցանցի, այլ նրա՝ մի մասի նկատմամբ:

Հաշվեքննության ընթացքում պարզվեց, որ ՀՀ պետական բյուջեով 2017թ.-ին տարեկան ճշտված նախահաշվով սահմանվել է 138.360,0 հազար դրամ, 2018թ.-ին՝ 161.010,0 հազար դրամ (ընդամենը՝ 299.370,0 հազար դրամ), դրամարկղային և փաստացի ծախսերի գծով ֆինանսավորման տարբերություններ չեն առաջացել: 2017-2018թ. ֆինանսավորման աճը՝ 22.650,0 հազար դրամ առաջացել է ընթացիկ «Գարուն-ամառ-աշուն» ժամանակաշրջանի պահպանման աշխատանքների մարզային 11.6 կմ երկարությամբ ավտոճանապարհների սպասարկման (15.538,4 հազար դրամ) և «Ձմեռ» ժամանակաշրջանի պահպանման աշխատանքների մարզային 25.3 կմ երկարությամբ

ավտոճանապարհների սպասարկման (7.111,6 հազար դրամ) ավելացման պատճառով: Ընդ որում, վերոնշյալ տարբերության վրա ազդել է նաև «Գարուն-ամառ-աշուն» ժամանակաշրջանի պահպանման աշխատանքներում մարզային ավտոճանապարհների սպասարկման պահանջվող մակարդակների փոփոխությունը:

Անհամապատասխանություն կամ խեղաթյուրում

6.1 Մարզպետարանի հետ թվով 3 կապալառու կազմակերպությունները («Կապանի ՃՇՇ»՝ Կապանի տարածաշրջան՝ 172.3 կ, «Ոսմար» ՍՊԸ՝ Գորիսի տարածաշրջան՝ 146.7 կմ և «Մեղրիի ՃՇՇՁ» ՍՊԸ-ը՝ Սիսիանի տարածաշրջան՝ 147.0 կմ և Մեղրիի տարածաշրջան՝ 49.2 կմ) հետ պետության կարիքների համար ՀՀ մարզային նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների կատարման պետական գնման 2016թ.-ին կնքված հիմնական պայմանագրերում հաշվարկները կատարել են ոչ թե ճանապարհահատվածի ամբողջ ցանցի, այլ նրա մի մասի նկատմամբ: Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 4-ի «ՀՀ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման մակարդակների գնահատման ու կատարված աշխատանքների ընդունման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 1942 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1419-Ն որոշման հավելվածի 33-րդ կետով սահմանված դրույթներում: Նշենք նաև, որ ճանապարահահատվածների ամբողջ ցանցի նկատմամբ հաշվարկներ կատարելու անհրաժեշտությունը ներառված է նաև 2016թ.-ին կապալառու կազմակերպությունների հետ կնքված հիմնական պայմանագրերի հավելված 1-ի երրորդ գլխում:

Առաջարկել *Մարզպետարանին միջոցներ ձեռնարկել, որոնցով կբացառվեն կապալառուների հետ գնման գործընթացներում, վերջիններիս հետ հիմնական պայմանագրերի և շրջանակային համաձայնագրերի կնքման ժամանակ իրավական ակտերի պահանջների անհամապատասխանությունները:*

7. Մարզպետարանի կողմից կատարված «Հանրակրթական ուսուցում»-ներ ծրագրերի վերաբերյալ

Հաշվեքննության ընթացքում պարզվեց, որ ըստ Մարզպետարանի 2017թվականի հանրակրթական երեք ուսուցման ծրագրերով տարեկան պլանը կազմել է 4.474.111,3 հազար դրամ, ճշտված պլանը՝ 4.480.019,2 հազար դրամ, տարբերությունը կազմել է 5,908.0 հազար դրամ: Համաձայն ՀՀ կառավարության 2017թ. դեկտեմբերի 9-ի թիվ 1403-Ն որոշման վերաբաշխումների, «Հանրակրթական դպրոցների մանկավարժներին և դպրոցահասակ երեխաներին տրանսպորտային ծախսերի փոխհատուցում» (09060112) ծրագրի 4.200,0 հազար դրամ, «Ատեստավորման միջոցով որակավորում ստացած ուսուցիչներին հավելավճարների տրամադրում» (09060130) ծրագրի 818,0 հազար դրամ գերածախսերի և «Նախադպրոցական կրթություն» (09010101) ծրագրի 2.361,1 հազար դրամի տնտեսման տարբերության՝ 8.564,8 հազար դրամի շրջանակներում՝ ՀՀ պետական բյուջեից փոխհատուցվել է:

Մարզպետարանի 2018 թվականի հանրակրթական երեք ուսուցման ծրագրերով տարեկան պլանը կազմել է 4.438.710,9 հազար դրամ, ճշտված պլանը՝ 4,.426.898,5 հազար դրամ, տարբերությունը կազմել է 11.812,4 հազար դրամ: Համաձայն ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 9-ի թիվ 1438-Ն որոշման վերաբաշխումների, «Նախադպրոցական կրթություն» (09010101) ծրագրի 562,6 հազար դրամի տնտեսման, «Հանրակրթական դպրոցների մանկավարժներին և դպրոցահասակ երեխաներին տրանսպորտային ծախսերի փոխհատուցում» (09060112) ծրագրի 3.952,6 հազար դրամ և «Ատեստավորման միջոցով որակավորում ստացած ուսուցիչներին հավելավճարների տրամադրում» (09060130) ծրագրի 228,1 հազար դրամ գերածախսերի տարբերության՝ 8.194,3 հազար դրամի շրջանակներում, հետ է վերադարձվել ՀՀ պետական բյուջե:

Ինչպես 2017 թվականին, այնպես էլ՝ 2018-ին տարեկան ճշտված պանների և դրամարկղային ծախսերի միջև տարբերություններ չեն հայտնաբերվել:

2017թ.-ի պետական բյուջեով հանրակրթական երեք ուսուցման ծրագրերով փաստացի ծախսերի 17.372,3 հազար դրամով դրամարկղային ծախսերի նկատմամբ գերազանցումը, իսկ 2018թ.-ի պետական բյուջեով հանրակրթական երեք ուսուցման ծրագրերով փաստացի ծախսերի 32.429,1 հազար դրամով դրամարկղային ծախսերի նկատմամբ գերազանցումը իրենից ներկայացնում է կոմունալ ծախսերի գծով տարեվերջյան դեբիտորական և/կամ կրեդիտորական պարտքերի առաջացմամբ:

Անհամապատասխանություններ կամ խեղաթյուրումներ

Մարզի որոշ դպրոցներում լաբորատարիների բացակայությամբ առկա են լաբորանտների հաստիքներ:

Թվով 2 դպրոցներում աշակերտները ավել են կոմպլեկտավորվել, իսկ մեկ դպրոցում՝ երկու աշակերտներ ստացել են կրկնակի ֆինանսավորում:

7.1 «Կապանի թիվ 7 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում չկան լաբորատորիաներ, հաստիքացուցակով առկա են 2 լաբորանտ աշխատակիցներ: Առկա է անհամապատասխանություն ՀՀ Կրթության և գիտության նախարարի 2010 թ.-ի նոյեմբերի 23-ի «Հանրակրթական ուսումնական հաստատության լիցենզավորման տարտադիր պահանջները և պայմանները ապահովող լաբորատորիաների, արհեստանոցների, մարզադահլիճի սարքերի, սարքավորումների, նյութերի և գույքի անհրաժեշտ հագեցվածության անվանացանկը և չափաքանակը հաստատելու մասին» թիվ 1638-Ն հրամանի Հավելվածի համապատասխան բաժիններում սահմանված պահանջներում և պայմաններում:

7.2 Թվով 2 դպրոցների աշակերտների շարժի մատյանների, հրամանագրքերի և դասամատյանների հաշվեքննությամբ պարզվեց, որ 2018-2019թթ. ուսումնական տարում «Սիսիանի թիվ 5 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում մեկ աշակերտով, իսկ «Սիսիանի թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում 2 աշակերտներով ավել են կոմպլեկտավորվել: Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 24-ի «ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ծախսերի հաշվարկման և ՀՀ կառավարության 2001 թվականի օգոստոսի 25-ի թիվ 773 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1262–Ն որոշման 1.1 ենթակետով սահմանված բանաձևում:

«Մեղրիի թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում աշակերտների շարժի մատյանի, հրամանագրքի և դասամատյաններով 2018-2019թթ. ուսումնական տարում թվով 2 աշակերտներ ստացել են կրկնակի ֆինանսավորում: Առկա է անհամապատասխանություն ՀՀ Գիտության և կրթության նախարարի 2013 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 1365–Ն հրամանով հաստատված կարգում:

7.3 «Գորիսի թիվ 3 հիմնական պրոց» ՊՈԱԿ-ում դասամատյանների ուսումնասիրություններից պարզվեց որ թվով 3 դասղեկների կողմից արձանագրվել են անհամապատասխանություններ դասամատյանների վարման կարգի 1,2,7-րդ կետերի պահանջներում (մատիտով կատարված հաշվարկներ, լրացումներ, ջնջումներ և այլն):

7.4 «Սիսիանի թիվ 5 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի դասամատյաններում որոշ դասղեկների կողմից արձանագրվել են անհամապատասխանություններ դասամատյանների վարման կարգի պահանջներում (տեղեկություններ սովորողների մասին էջի լրացման կարգը՝ «ուսումնական հաստատությունից հեռացման ամիսը և ամսաթիվը, հրամանի համարը և պատճառը» սունյակներում):

7.5 «Սիսիանի թիվ 4 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում 2017-2018թ. ուսումնական տարվա 1-ին կիսամյակի տարիֆիկացիոն մատյանը լրացված է ջնջումներով, կատարված են նշումներ մատիտով, որով արձանագրվել են անհամապատասխանություններ տարիֆիկացիոն մատյանների վարման կարգի պահանջներում:

7.6 Թվով 2 դպրոցներում («Կապանի թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ և «Ագարակի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ) դպրոցների վարչական աշխատողները դասավանդել են շաբաթական համապատասխանաբար՝ 12 ժամ և 14 ժամ, այն դեպքում, երբ վարչական աշխատողներին ուսումնական հաստատությունում համապատասխան որակավորման դեպքում թույլատրվում է համատեղության կարգով ունենալ մինչև 8 ժամ ուսումնական ծանրաբեռնվածություն: Առկա է անհամապատասխանություն «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդված 4-րդ մասի պահանջների հետ:

7.7 ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության «Սեյսմիկ պաշտպանության արևմտյան ծառայություն» ՊՈԱԿ-ի «Կառուցվածքների սեյսմակայունության կենտրոն»–ի (ԿՍԿ) կողմից «ՀՀ Սյունիքի մարզի դպրոցների տեխնիկական վիճակի և սեյսմիկ խոցելիության աստիճանի գնահատման վերաբերյալ» հաշվետվության 9,10 և 11 կետերի համաձայն «Սյունիքի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի մասնաշենքերի տեխնիկական վիճակը գնահատվել է անբավարար՝ 3-րդ աստիճանի, կոնստրուկտիվ տարրերի շահագործումը թույլատրվել է բացառապես կապիտալ նորոգումից հետո: Միաժամանակ, գնահատվել է վնասվածքի 4-րդ աստիճանի վտանգավորության մոտեցման հնարավորությունների ռիսկը, ըստ որի խոցելիության մակարդակը արձանագրվել է «բարձր»:

Թվով 1 դպրոցում սկսած 2017թ.-ից պետական բյուջեից ֆինասավորված 1.426.8 հազար դրամի պայմաններում մանկավարժների և աշակերտների տրանսպորտային փոխադրումները իրականացվել են դպրոցին նվիրաբերված ավտոմեքենայով:

7.8 «Որոտանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ին 2017թ-ին «Քոնթուր Գլոբալ» ընկերությունը նվիրաբերվել է «ԳԱԶ 32213» մակնիշի ավտոմեքենա, որը հրամանով ամրակցվել է ՊՈԱԿ-ի տնօրենին: 2017–2018 թթ. տարեկան ծախսերի նախահաշիվներով հիշյալ ավտոմեքենայի

պահպանման և շահագործման ծախսերը չեն ընդունվել Մարզպետարանի կողմից և ՊՈԱԿ-ին (426400) «Տրանսպորտային նյութեր» հոդվածով գումարներ չեն նախատեսվել: ՀՀ պետական բյուջեից 2017-2018թթ.-ին «Հանրակրթական դպրոցների մանկավարժներին և դպրոցահասակ երեխաներին տրանսպորտային ծախսերի փոխհատուցում» (09060112) ծրագրով ՊՈԱԿ-ին հատկացվել են 1.426.8 հազար դրամ ֆինանսավորում, որը ծախսերով ձևակերպվել և իրականացվել են: ՊՈԱԿ-ի մանկավարժների և աշակերտների տրանսպորտային փոխադրումները սկսած 2017թ.-ից իրականացվում են վերոհիշյալ ավտոմեքենայի միջոցով:

7.9 Սիսիան քաղաքի Նար-Դոսի 1 հասցեում գտնվող «Սիսիանի թիվ 4 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ին հատկացված ոչ բնակելի տարածքի անհատույց օգտագործման պայմանագրից (թիվ 221/0018, 11.12.2018թ, գ/մ 15874) ծագող սեփականության իրավունքի թիվ 20122018-09-0016 վկայականում ըստ շինությունների բնութագրի թիվ 1 (1292,46 ք.մ) և թիվ 2 (2157,0 ք.մ) մասնաշենքերը նպատակային օգտագործման տեսակետից ֆիքսված են որպես հասարակական նշանակության շինություններ: Թիվ 1 մասնաշենքի 3-րդ և 4-րդ հարկերում բնակվում են ընտանիքներ, որոնք տեղավորվել են մասնաշենքում Սիսիան քաղաքի գործադիր իշխանության կողմից: Միևնույն մասնաշենքում հանրակրթական աշխատանքներ իրականացնող դպրոցի և բնակելի նշանակության տարածքների առկայությունը խոչընդոտում է ուսումնադաստիրակչական աշխատանքների կազմակերպմանը, ստեղծում՝ հակասանիտարական իրավիճակ: Առկա են անհամապատասխանություններ նաև ՀՀ կրթության և գիտության նախարարության 2011թ.-ի ապրիլի 05-ի «Տարրական հանրակրթական ծրագրերի իրականացման» թիվ Ա 0825 և «Հիմնական հանրակրթական ծրագրերի իրականացման» թիվ Ա 0815 անժամկետ լիցենզիաներով սահմանված պահանջներում ու չափորոշիչներում:

***Առաջարկել** Մարզպետարանին.*

1. Դպրոցներում լաբորատորիաներ կազմակերպելիս, աշակերտների կոմպլեկտավորման, տարիֆիկացիաների հաստատման, դպրոցներում սովորողների տեղափոխման ժամանակ անհրաժեշտ է առաջնորդվել նորմատիվ իրավական ակտով սահմանված չափորոշիչներով:

2. Հաշվի առնելով «Սյունիքի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի մասնաշենքային պայմանների սեյսմիկ անվտանգության բարձր ռիսկերը, հրատապ ռեժիմով այն ներառել կրթական օբյեկտների կապիտալ վերանորոգման որևէ ծրագրերում:

3. Միջոցառումներ ձեռնարկել Մարզպետարանի ենթակայության «Որոտանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնական միջոցի՝ ավտոմեքենայի, պահպանման և շահագործման ծախսերը փոխհատուցելու, ինչպես նաև հիմնավորել «Հանրակրթական դպրոցների մանկավարժներին և դպրոցահասակ երեխաներին տրանսպորտային ծախսերի փոխհատուցում» (09060112) ծրագրով հատկացված 1.426.8 հազար դրամի ծախսերը:

4. ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի համայնքապետարանի հետ համատեղ կարգավորել «Սիսիանի թիվ 5 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի թիվ 1 մասնաշենքում ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից տրամադրված տարրական և հանրակրթական լիցենզիաներով պահանջվող գործունեության հետ կապված հարցերը:

8. Մարզպետարանի և նրա ենթակայության հանրակրթական դպրոցների կողմից իրականացված գնումների գործընթացի վերաբերյալ

Անհամապատասխանություններ կամ խեղաթյուրումներ

ՀՀ Սյունիքի մարզի հանրակրթական կազմակերպությունների գնումների գործընթացի շրջանակներում հաշվեքննության ընթացքում պարզվեց,

8.1 Մարզպետարանի և նրա ենթակայության թվով 12 դպրոցների 2017-2018թթ. մեկ անձից կատարված 1 մլն. դրամը չգերազանցող գնումների վերաբերյալ պահանջվող էլեկտրոնային փաստաթղթերը բացակայում են: Առկա է անհամապատասխանություն «Գնումների մասին» (16.12.2016 թ.) ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշման ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 526-Ն որոշման պահանջներում:

8.2 2017-2018թթ. ֆինանսական տարիներին թվով 3 հանրակրթական դպրոցների կողմից գնումները՝ 22.612,1 հազար դրամ, կատարվել են առանց պատասխանատու ստորաբաժանումներ և գնահատող հանձնաժողովներ ձևավորելու: Չեն պահպանվել գնումների կազմակերպման վերաբերյալ իրավական ակտերով սահմանված փաստաթղթերը և պահանջվող հիմքերը:

Մարզպետարանի աշխատակազմի և նրա ենթակայության թվով 12 դպրոցների մեկ անձից կատարված 1 մլն. դրամը չգերազանցող գնումների վերաբերյալ պահանջվող էլեկտրոնային փաստաթղթերը բացակայում են:

Թվով 3 հանրակրթական դպրոցների կողմից գնումները՝ 22.612,1 հազար դրամ, կատարվել են առանց պատասխանատու ստորաբաժանումներ և գնահատող հանձնաժողովներ ձևավորելու:

8.3 Թվով 12 հանրակրթական դպրոցների կողմից մեկ անձից կատարված մեկ միլիոն դրամը չգերազանցող գնումները կատարվել են տնտեսվարող անձանց հետ ուղղակի կնքված պայմանագրերի հիման վրա: Առկա են անհամապատասխանություններ «Գնումների մասին» ՀՀ օրենքով (16.12.2016 թ.) սահմանված ընթացակարգերում:

8.4 2017-2018թթ.-ին թվով 3 հանրակրթական դպրոցների կողմից մեկ անձից կատարված 500.000 դրամը չգերազանցող գնումների վերաբերյալ էլեկտրոնային փաստաթղթերը առկա չեն: Առկա են անհամապատասխանություններ «Գնումների մասին» ՀՀ օրենքի (16.12.2016 թ.) 9-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջների հետ:

8.5 Թվով 4 հանրակրթական դպրոցներում բացակայում են մասնակիցների կողմից ներկայացվող հայտերի գրանցամատյանները: Առկա են անհամապատասխանություններ ՀՀ կառավարության 2017թ.-ի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011թվականի փետրվարի 1-ի թիվ 168-Ն որոշման ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 526-Ն որոշման հավելված 1-ի 39-րդ մասի պահանջներում:

8.6 Թվով 1 հանրակրթական դպրոցում չի պահպանվել 2017թ-ի տարեկան գնումների պլանը: Առկա չեն 2017թ.-ին տարրական դասարանների աշակերտների համար սնունդ ձեռք բերելու նպատակով կատարված գնման մասնակցի (մասնակիցների) հայտը (հայտերը), հայտերի գրանցման գրանցամատյանը, գնման ընթացակարգի արձանագրությունը, գնման

գործընթացի վերաբերյալ որևէ հրապարակում տեղեկագրում չկա: Հնարավոր չէ որոշել հայտի (հայտերի) ներկայացման համար սահմանված ժամանակահատվածը և ներկայացման ամսաթիվը: Արդյունքում արձանագրվել են անհամապատասխանություններ «Գնումների մասին» ՀՀ օրենքի (22.12.2010 թ.) 7-րդ հոդվածի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին կետով, 14-րդ հոդվածի 4-րդ կետով, 24-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված պահանջներում:

8.7 Թվով 1 հանրակրթական դպրոցում գնանշման հարցման ընթացակարգով կազմակերպված գնման ընթացքում կնքվել է 1.284,0 հազար դրամ գումարի չափով պայմանագիր և գործարքը կատարվել է մինչև անգործության ժամկետի լրանալը: Առկա է անհամապատասխանություն «Գնումների մասին» ՀՀ օրենքի (16.12.2016 թ.) 10-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ կետերի պահանջների հետ:

8.8 Թվով 1 հանրակրթական դպրոցում 2017թ.-ի դեկտեմբերին կատարվել է համակարգչի գնում 140.000 ՀՀ դրամի չափով, որը ներառված չէ 2017թ-ի տարեկան գնումների պլանում: Առկա են անհամապատասխանություններ ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշման ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 526-Ն որոշման հավելված 1-ի 16-րդ կետի պահանջներում:

8.9 Թվով 1 հանրակրթական դպրոցում չի ձևավորվել գնումների գնահատող հանձնաժողով: Առկա են անհամապատասխանություններ «Գնումների մասին» ՀՀ օրենքի (16.12.2016թ.) 26-րդ հոդվածի պահանջներում:

Թվով 1 հանրակրթական դպրոցում 2017թ-ին պետական բյուջեի միջոցներից տարրական դասարանների սննդի կազմակերպման համար դպրոցին պետական բյուջեով հատկացված գումարից՝ 571,8 հազար դրամով , կատարվել են տնտեսական և կենցաղային ապրանքների ձեռքբերումներ:

8.10 Թվով 1 հանրակրթական դպրոցում 2017թ-ին պետական բյուջեի միջոցներից տարրական դասարանների սննդի կազմակերպման համար դպրոցին պետական բյուջեով հատկացված գումարից՝ 571,8 հազար դրամով կատարվել են տնտեսական և կենցաղային ապրանքների ձեռքբերումներ: Թվով 1 հանրակրթական դպրոցում 2017թ.-ի հունվարի ամսից մինչև 2018թ.-ի ապրիլ ամիսը տարրական դասարանների աշակերտների համար բյուջեից հատկացված սննդի գումարը տեղափոխել է արտաբյուջեի հաշվին և իրականացրել սննդամթերքի ձեռքբերման գծով գնումներ: Արդյունքում արձանագրվել են անհամապատասխանություններ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգմամբ սահմանված պահանջներում և չափորոշիչներում:

Առաջարկել Մարզպետարանին և հանրակրթական դպրոցներին գնումների գործընթացը իրականացնել բացառապես«Գնումների մասին» (16.12.2016 թ.) ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 1-ի թիվ 168-Ն որոշման ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 526-Ն որոշմամբ, ինչպես նաև այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

9. Մարզպետարանի կողմից «Թատերական ներկայացումներ» ծրագրի կատարման վերաբերյալ

Հաշվեքննության ընթացքում պարզվել է, որ ՀՀ պետական բյուջեով, «Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական կազմակերպություններին» 451100 հոդվածով 2017թ.-ին տարեկան ճշտված նախահաշվով սահմանվել է 72.043,0 հազար դրամ, 2018թ.-ին՝ 69.306,1 հազար դրամ (ընդամենը՝ 141349,1 հազար դրամ), դրամարկղային և փաստացի ծախսերի գծով ֆինանսավորման տարբերություններ չեն առաջացել: Հաշվեքննության ընթացքում ուսումնասիրվել են «Կապանի Ա. Շիրվանզադեի անվան պետական դրամատիկական թատրոն» ՊՈԱԿ-ին գնում չհանդիսացող պայմանագրով Մարզպետարանը ամսեկան համամասնություններով փոխանցվող պետական բյուջեով սահմանված ֆինանսավորումները, որտեղ տարբերություններ և անհամապատասխանություններ չեն արձանագրվել: Սյունիքի մարզպետի ՊՈԱԿ-ի աշխատակիցների աշխատանքի չհաճախելու սակայն ըստ հաստիքացուցակների համապատասխան աշխատավարձեր ստանալու վերաբերյալ, ՀՀ Սյունիքի մարզի դատախազին հասցեագրված հաղորդման հիման վրա հարուցվել է քրեական գործ, որի արդյունքում 13.07.2019թ. արձանագրությամբ ՊՈԱԿ-ի բոլոր հաշվապահական փաստաթղթերը, բյուջետային ծախսերի նախահաշիվները, հաշվետախտակները, հաշվապահական տեղեկագրերը և այլ նյութերն առգրավվել, ինչը հնարավորություն չի տվել իրականացնել հաշվեքննություն նշված ծրագրի ծախսերի մասով:

10. Մարզպետարանի կողմից «Կառավարության պահուստային ֆոնդ» ծրագրի կատարման վերաբերյալ («Ընթացիկ սուբվենցիաներ համայնքներին» 463200)

Հաշվեքննության ընթացքում պարզվել է, որ 2017թ.-ի տարեկան ճշտված պլանով սահմանվել է 353.249.0 հազար դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 344.281,8 հազար դրամ, փաստացի ծախսը՝ 343.453,8 հազար դրամ: 2018թ.-ի տարեկան ճշտված պլանով սահմանվել է 253.998,9 հազար դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 253.639,9 հազար դրամ, փաստացի ծախսը՝ 254.467,9 հազար դրամ: 2017թ.-ի տարեկան ճշտված պլանի 8.967.8 հազար դրամով դրամարկղային ծախսի նկատմամբ տարբերությունը առաջացել է (511300) «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» հոդվածի 7.704,9 հազար դրամի և (513400) «Նախագծահետազոտական ծախսեր» հոդվածի 1.263. 0 հազար դրամի հանրագումարից, որոնք հետ են վերադարձվել ՀՀ պետական բյուջե:

2017թ.-ին գնանշման հարցմամբ, առանց գնանշման, գնում չհանդիսացող և մեկ անձի հետ կնքված պայմանագրերի ընդհանուր արժեքը կազմել է 347,988.0 հազար դրամ, որից 22,590.6 հազար դրամը կանխավճարի տեսքով: Նշված պայմանագրերի դիմաց վճարումները կազմել են 344,281.8 հազար դրամ՝ 3,706.2 հազար դրամ պայմանագրային մնացորդի առկայությամբ: 2018թ.-ի տարեկան ճշտված պլանի 359.0 հազար դրամով դրամարկղային ծախսի նկատմամբ տարբերությունը առաջացել է (463900) «Այլ ընթացիկ դրամաշնորհներ» հոդվածի 315.0 հազար դրամի և (512200) «Վարչական սարքավորումներ» հոդվածի 44.0 հազար դրամի հանրագումարից, որոնք հետ են վերադարձվել ՀՀ պետական բյուջե: 2018թ.-ին

կնքված բոլոր պայմանագրերի ընդհանուր արժեքը կազմել է 244.426,3 հազար դրամ, որոնց դիմաց վճարումները կազմել են 244.246,3 հազար դրամ՝ 180,0 հազար դրամ պայմանագրային մնացորդի առկայությամբ: 2017թ.-ի դրամարկղային և փաստացի ծախսերի միջև 828.0 հազար դրամ և 2018թ. դրամարկղային և փաստացի ծախսերի միջև նույն գումարի տարբերությունները առաջացել են (512200) «Վարչական սարքավորումներ» հոդվածով սկսների և համակարգչային տեխնիկայի ձեռքբերման հետ:

Անհամապատասխանություններ կամ խեղաթյուրումներ

Մարզպետարանի և կապալառուների միջև կնքված սուբվենցիոն պայմանագրերում բացակայում են «Սուբվենցիայի չօգտագործված գումարի՝ ՀՀ պետական բյուջե վերադարձման» մասին և «Սուբվենցիայի չօգտագործված գումարի՝ ՀՀ պետական բյուջե վերադարձման մասին» սահմանված պայմանները:

Կատարողական ակտերը ներկայացվում և ընդունվում են սուբվենցիոն պայմանագրերով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետին անհամապատասխան:

10.1 Մարզպետարանը 17.10.2018թ.-ին ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի հետ կնքել է «Սուբվենցիա տրամադրելու մասին» թիվ ՍՄԱՀ-09 պայմանագիրը (ավարտը՝ 20.12.2018թ.), որի առարկան Գորիս համայնքի դիտակետի և հարակից ճանապարհի վերակառուցումը (59.904,0 հազար դրամ) և Գորիս համայնքի մշակույթի տան հարակից ճեմուղու և կենտրոնական հրապարակի հարակից տարածքների (61.128,0 հազար դրամ) բարեկարգումն է, ընդամենը՝ 121.032,0 հազար դրամ: Հիշատակված պայմանագրում բացակայում է՝ «Սուբվենցիայի չօգտագործված գումարի՝ ՀՀ պետական բյուջե վերադարձման» մասին իրավական ակտերով սահմանված պայմանը: Առկա են անհամապատասխանություններ ՀՀ կառավարության 16.11.2006թ.-ի «ՀՀ պետական բյուջեից համայնքներին սուբվենցիաների տրամադրման կարգը հաստատելու մասին» թիվ 1708 որոշման հավելվածի 1-ին 6-րդ կետի դ) ենթակետի պահանջներում:

10.2 Մարզպետարանը 10.10.2018թ.-ին ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի հետ կնքել է «Սուբվենցիա տրամադրելու մասին» թիվ ՍՄԱՀ-07 պայմանագիրը (ավարտը՝ 20.12.2018թ.), որի առարկան Սիսիանի քաղաքի Նար-Դոսի 5 հասցեի բազմաբնակարան շենքի աստիճանահարթակի վերանորոգման նպատակով Սիսիանի համայնքին աջակցության տրամադրումն է, 19.950,0 հազար դրամ արժեքով: Նշված պայմանագրում բացակայում է «Սուբվենցիայի չօգտագործված գումարի՝ ՀՀ պետական բյուջե վերադարձման» մասին իրավական ակտերով սահմանված պայմանը: Պայմանագրում բացակայում են նաև «Սուբվենցիայի գումարի կամ դրա մի մասի ոչ նպատակային օգտագործման դեպքում այդ համայնքի նկատմամբ պետության կողմից կիրառվող պատժամիջոցները, այն է՝ ոչ նպատակային օգտագործված գումարի հետգանձում համայնքի միջոցներից սուբվենցիայի միջոցների հետագա հատկացման հնարավոր դադարեցման» մասին իրավական ակտերով սահմանված պայմանը: Առկա են անհամապատասխանություններ ՀՀ կառավարության 16.11.2006թ.-ի «ՀՀ պետական բյուջեից համայնքներին սուբվենցիաների տրամադրման կարգը հաստատելու մասին» թիվ 1708 որոշման հավելվածի 1-ի 6-րդ կետի դ) ենթակետերի պահանջներում:

Աշխատանքները կատարող «Հիդրո» ՍՊԸ–ի և աշխատանքները ընդունող՝ Սիսիանի համայնքապետարանի, 21.12.2018թ.-ին «Կատարված աշխատանքների մասին» թիվ 01 ակտի ուսումնասիրությամբ պարզվեց, որ պայմանագրի ժամկետի ավարտին կատարողական ակտով ներկայացվել և ընդունվել են 7.389,1 հազար դրամը, որով արձանագրվել են անհամապատասխանություններ սուբվենցիոն պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետի մեջ:

10.3 Մարզպետարանը 04.12.2018թ.-ին ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի հետ կնքել է «Սուբվենցիա տրամադրելու մասին» թիվ ՍՄԱՀ-12 պայմանագիրը (ավարտը՝ 01.06.2019թ.), որի առարկան Սիսիանի համայնքի նախակրթարանների արդիականացումն է՝ 16.133,3 հազար դրամ արժեքով: Պայմանագրում բացակայում է «Սուբվենցիայի գումարի կամ դրա մի մասի ոչ նպատակային օգտագործման դեպքում այդ համայնքի նկատմամբ պետության կողմից կիրառվող պատժամիջոցները, այն է՝ ոչ նպատակային օգտագործված գումարի հետգանձում համայնքի միջոցներից սուբվենցիայի միջոցների հետագա հատկացման հնարավոր դադարեցման» մասին իրավական ակտերով սահմանված պայմանը: Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 16.11.2006թ.-ի «ՀՀ պետական բյուջեից համայնքներին սուբվենցիաների տրամադրման կարգը հաստատելու մասին» թիվ 1708 որոշման հավելվածի 1-ի 6-րդ կետի դ) ենթակետի պահանջում: Մինչև սուբվենցիոն պայմանագրի ավարտը 16.133,3 հազար դրամից կատարողական ակտերով ընդունված է 9.051,1 հազար դրամի կատարված աշխատանքները, որով արձանագրվել է անհամապատասխանություն սուբվենցիոն պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետում:

10.4 Մարզպետարանը 21.12.2018թ.-ին ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի հետ կնքել է «Սուբվենցիա տրամադրելու մասին» թիվ ՍՄԱՀ-13 պայմանագիրը (ավարտը՝ 28.12.2018թ.), որի առարկան Սիսիանի համայնքի ավազե խաղահրապարակների կառուցումն է՝ «Կապիտալ սուբվենցիաներ համայնքներին» հոդվածով՝ 18.316,4 հազար դրամ: Պայմանագրում բացակայում է «Սուբվենցիայի գումարի կամ դրա մի մասի ոչ նպատակային օգտագործման դեպքում այդ համայնքի նկատմամբ պետության կողմից կիրառվող պատժամիջոցները, այն է՝ ոչ նպատակային օգտագործված գումարի հետգանձում համայնքի միջոցներից սուբվենցիայի միջոցների հետագա հատկացման հնարավոր դադարեցման» մասին պայմանը, է ՀՀ կառավարության 16.11.2006թ.-ի «ՀՀ պետական բյուջեից համայնքներին սուբվենցիաների տրամադրման կարգը հաստատելու մասին» թիվ 1708 որոշման հավելվածի 1-ի 6-րդ կետի դ) ենթակետով: Մինչև սուբվենցիոն պայմանագրի կնքումը 18.316.4 հազար դրամից կատարողական ակտերով ընդունվել է 17.648,2 հազար դրամի կատարված աշխատանքները, իսկ սուբվենցիոն պայմանագրի ընթացքում՝ 668.2 հազար դրամի կատարված աշխատանքները:

10.5 Մարզպետարանը 04.12.2018թ.-ին ՀՀ Սյունիքի մարզի Քաջարան համայնքի հետ կնքել է «Սուբվենցիա տրամադրելու մասին» թիվ ՍՄԱՀ-10 պայմանագիրը (ավարտը՝ 01.06.2019թ.), որի առարկան Քաջարան համայնքի նախադպրոցական կրթության զարգացումը (15.405,0 հազար դրամ) և Քաջարան քաղաքի Գայի փողոցի բարեկարգման աշխատանքների (12.848,7 հազար դրամ) իրականացումն է՝ «Կապիտալ սուբվենցիաներ համայնքներին» հոդվածով՝ ընդամենը 28.253.7 հազար դրամ:

Հաշվեքննությամբ պարզվեց, որ համաձայն 19.07.2018թ.-ին կնքված թիվ ՍՄՔՀ-ԳՀԱՇՁԲ 18/07 «Կապանի ՃՇՇ» ՍՊԸ-ի և ՀՀ Սյունիքի մարզի Քաջարանի համայնքապետարանի միջև «Քաջարանի քաղաքի Գայի փողոցի հիմնանորոգման և բարեկարգման աշխատանքների» պայմանագրի արժեքը կազմել է 33.115,2 հազար դրամ, որից 12.848,7 հազար դրամը համայնքին տրամադրվելու էր սուբվենցիոն տեսքով: Արձանագրվել է, որ 17.10.2018թ.-ին

կազմված թիվ 1 կատարողական ակտով ընդունվել են 33.115,2 հազար դրամ աշխատանքները: Արդյունքում, սուբվենցիան տրամադրվել է Քաջարան քաղաքի Գայի փողոցի բարեկարգման աշխատանքների ավարտից հետո:

10.6 Մարզպետարանը 17.10.2018թ.-ին ՀՀ Սյունիքի մարզի Քաջարան համայնքի հետ կնքել է «Սուբվենցիա տրամադրելու մասին» թիվ ՍՄԱՀ-08 պայմանագիրը (ավարտը՝ 20.12.2018թ.), որի առարկան Քաջարան համայնքի մարզահրապարակի կառուցումն է՝ 13.375,4 հազար դրամ արժեքով: Մինչև սուբվենցիոն պայմանագրի ավարտը կատարողական ակտերով ընդունվել են 10.151,7 հազար դրամի կատարված աշխատանքները, որով արձանագրվել է անհամապատասխանություն է սուբվենցիոն պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետում:

Առաջարկել Մարզպետարանին ներդնել այնպիսի վերահսկողական համակարգեր, որոնցով կբացառվեն ՀՀ կառավարության 16.11.2006թ.-ի «ՀՀ պետական բյուջեից համայնքներին սուբվենցիաների տրամադրման կարգը հաստատելու մասին» թիվ 1708 որոշման հավելվածի 1-ի 6-րդ կետի գ) և դ) ենթակետերի պահանջների անհամապատասխանությունները:

11. Մարզպետարանի կողմից «Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, փողային և լարային նվագարանների գծով ուսուցում» ծրագրի կատարման վերաբերյալ («Ընթացիկ սուբվենցիաներ համայնքներին» 463200)

Հաշվեքննության ընթացքում պարզվել է, որ 2017թ.-ին ֆինանսավորումը կազմել է 41.077,3 հազար դրամ, իսկ 2018թ.-ին՝ 35.939,9 հազար դրամ (ընդամենը՝ 77017.2 հազար դրամ), տարեկան ծրագրի, ճշտված պլանի, դրամարկղային և փաստացի ծախսերի միջև 2017-2018թթ. տարբերություններ չեն առաջացել: Ըստ 2017-2018թթ. ֆինանսավորման դինամիկայի բացասական տարբերությունը կազմել է 5.137,4 հազար դրամ, շահառուների քանակը՝ 154 սովորող, պետական բյուջեի ֆինանսավորման օբյեկտների թիվը՝ 5 համայնքապետարաններ և համայնքային ենթակայության թվով 10 երաժշտական և արվեստի դպրոցներ:

Երաժշտական և արվեստի դպրոցների հաշվետվությունների կառուցվածքը հակասում է բյուջեների կատարման իրավական ակտերի պահանջներին:

Երաժշտական և արվեստի դպրոցների սովորողների թվաքանակը կայուն է ՀՀ պետական բյուջեից 2017-2018թ. սուբվենցիայի տարեկան հատկացման և համայնքների ֆինանսավորման նվազեցման պայմաններում:

Անհամապատասխանություններ կամ խեղաթյուրումներ

11.1 Երաժշտական և արվեստի դպրոցների կողմից համայնքներին և Մարզպետարանին ներկայացրած հաշվետվությունների տարբեր բաժինների տվյալների, ինչպես նաև վերջիններիս կողմից տրամադրված տեղեկատվության (տեղեկանքների) և Մարզպետարանի երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, փողային և լարային նվագարանների գծով 2017-2018թթ. ուսուցման համար ՀՀ պետական բյուջեով հատկացված միջոցների բաշխման

հաշվետվությունների (հավելված թիվ 5, աղյուսակ թիվ 17) տվյալների միջև առկա են անհամապատասխանություններ, այն է՝ լրացված են թերի, կան բաց թողնված, չլրացված տողեր և սյունակներ:

11.2 Մարզպետարանի և քաղաքային համայնքապետարանների, ինչպես նաև համայնքապետարանների և երաժշտական և արվեստի դպրոցների միջև կնքված սուբվենցիա տրամադրելու մասին պայմանագրերում բացակայում է՛ «Սուբվենցիայի չօգտագործված գումարի՝ ՀՀ պետական բյուջե վերադարձման» և «Սուբվենցիայի գումարի կամ դրա մի մասի ոչ նպատակային օգտագործման դեպքում այդ համայնքի նկատմամբ պետության կողմից կիրառվող պատժամիջոցները, այն է՝ «Ոչ նպատակային օգտագործված գումարի հետգանձում համայնքի միջոցներից սուբվենցիայի միջոցների հետագա հատկացման հնարավոր դադարեցման» մասին իրավական ակտերով սահմանված պայմանները: Առկա են անհամապատասխանություններ ՀՀ կառավարության է ՀՀ կառավարության 16.11.2006թ.-ի «ՀՀ պետական բյուջեից համայնքներին սուբվենցիաների տրամադրման կարգը հաստատելու մասին» թիվ 1708 որոշման հավելվածի 1-ի 6-րդ կետի գ) և դ) ենթակետերի պահանջներում:

11.3 Երաժշտական և արվեստի դպրոցները մարզի համայնքներին և Մարզպետարանին ներկայացնում է սահմանված կարգով տարեկան ամփոփ հաշվետվություններ, որոնցում ներկայացվում են ինչպես ՀՀ պետական բյուջեի տարեկան ֆինանսավորմամբ, այնպես էլ՝ համայնքային բյուջեներից ստացված միջոցների ծախսերի շրջանակներում ընդհանրական ֆինանսական և ոչ ֆինանսական բնույթի տեղեկատվություն: Նշված հաշվետվությունների կառուցվածքը հակասում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերին, ըստ որոնց՝ «Սուբվենցիաների հաշվին միջոցների մուտքագրման, ծախսերի կատարման, ինչպես նաև դրանց մասին հաշվետվությունների կազմման և համապատասխան մարմիններ ներկայացնելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են բյուջեների կատարման մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով»: Հիշատակված հաշվետվությունների կառուցվածքը հակասում է նաև ՀՀ կառավարության 2006թ.-ի նոյեմբերի 16-ի «ՀՀ պետական բյուջեից համայնքներին սուբվենցիաների տրամադրման կարգը հաստատելու մասին» թիվ 1706 որոշման հավելվածի 1-ի 7-րդ հոդվածի, ՀՀ կառավարության 2002թ.-ի հունվարի 18-ի «ՀՀ պետական և համայնքային բյուջեների կատարման կարգը հաստատելու մասին» թիվ 48 որոշման Հավելվածի երրորդ գլխի, ինչպես նաև ՀՀ կառավարության 2018թ.-ի հունիսի 15-ի «Բյուջեների կատարման կարգը հաստատելու մասին» թիվ 706 որոշման հավելվածի երրորդ գլխի պահանջներին և չափորոշիչներին:

11.4 Երաժշտական և արվեստի դպրոցները պետական պատվերի շրջանակներում 2017 - 2018 թթ. ուսումնական տարիների համար թվով 154 սովորողների ծնողների հետ կնքել են նույնատիպ պայմագրեր, ինչպես վճարովի համակարգով սովորողների, այնպես էլ՝ համայնքների կողմից 50%, 100% փոխհատուցվող սովորողների ծնողների հետ: Չեն տարանջատված և համարակալված մի կողմից պետական բյուջեից սուբվենցիայի շրջանակներում պետական պատվերով ուսուցման և համայնքների բյուջեներից համաֆինանսավորմամբ կամ ամբողջ վճարով փոխհատուցվող սովորողների ծնողների հետ կնքված, մյուս կողմից, անվճար և վճարովի համակարգերով սովորողների ծնողների հետ

կնքված պայմանագրերը: Ընդհանուր բնույթի սահմանված պայմանագրերում հիշատակված տարբերությունը հնարավոր է ճշտել բացառապես վճարի մասին համապատասխան ենթատողում գումարի չափի առկայության (դրամական արտահայտությամբ ամսեվճարի չափով) կամ բացակայության (գծիկով) համադրումներով:

11.5 Ըստ սուբվենցիաների տրամադրման կնքված պայմանագրերի հավելվածների 2017թ.-ին երաժշտական և արվեստի դպրոցներին տրամադրվող պետական բյուջեից սուբվենցիոն հատկացումներում մեկ սովորողի ուսուցման ծախսերի փոխհատուցման գումարը կազմել է 22.228,0 ՀՀ դրամ, իսկ 2018թ.-ին՝ 19.448,0 դրամ: ՀՀ պետական բյուջեից 2017-2018թ. սուբսիդիայի տարեկան հատկացումը նվազեցվել է 5.137,4 հազար դրամով, իսկ համայնքներից՝ համապատասխանաբար նվազել է 17.187,1 հազար դրամով (ընդամենը՝ 22.324,5 հազար դրամ): Ինչպես պետական բյուջեից, այնպես էլ համայնքային ֆինանսավորմամբ սովորողների ծախսերի միասնական համամասնությունների և հաշվետվությունների ներկայացումը դպրոցների կողմից չեն վարվում հիմնադիրների՝ համայնքների, և պետական բյուջեի ծրագրի ֆինանսական կարգադրիչի՝ Մարզպետարանի, համապատասխան պահանջի բացակայության պատճառով:

11.6 Երաժշտական և արվեստի դպրոցների ֆինանսատնտեսական գործունեության և հաշվապահական հաշվառման կազմակերպումն ու վարումը ՀՀ Սյունիքի մարզի Կապան քաղաքի երաժշտական և արվեստի դպրոցներում իրականացվում է «ՀՀ Սյունիքի մարզի Կապանի համայնքապետարանի հաշվապահական ծառայությունների կենտրոն» ՀՈԱԿ-ի կողմից՝ կնքված պայմանագրերի շրջանակներում, որակավորված մասնագետների կողմից (թվով 4), իսկ մնացած 6 երաժշտական և արվեստի դպրոցներում՝ հաստիքացուցակով սահմանված հաշվապահների կողմից: Հաշվապահական հաշվառման վարման մշակման քաղաքականության մեջ պետական բյուջեի միջոցների ծախսման առանձնացված հաշվառման հիմնախնդիրները արտացոլված չեն: Առկա է անհամապատասխանություններ «Հաշվապահական հաշվառման մասին», «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքներով և հաշվապահական հաշվառման ստանդարտներով սահմանված պահանջներում:

***Առաջարկել** Մարզպետարանին հսկողություն սահմանել երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, փողային և լարային նվագարանների գծով 2017-2018թթ. ուսուցման համար ՀՀ պետական բյուջեով հատկացված միջոցների բաշխման հաշվետվությունների կազմման և ներկայացման վրա: Մարզպետարանը համայնքներից պահանջով ՀՀ պետական բյուջեի «Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, փողային և լարային նվագարանների գծով ուսուցում» ծրագրի մասով հաշվետվությունների առանձին ձևերը, համայնքների կողմից ֆինանսավորումների համախմբից առանձնացված կարգով կներկայացվի միայն պետական բյուջեի միջոցների ծախսման հստակ ուղղությունները և բյուջետական հատկացումների պահանջվող նպատակային հիմնավորումները:*

12. Մարզպետարանի կողմից «Արտադպրոցական դաստիարակություն» ծրագրի կատարման վերաբերյալ («Ընթացիկ սուբսիդիաներ համայնքներին» 451100)

Հաշվեքննության ընթացքում պարզվել է, որ 2017թ.-ի ֆինանսավորումը կազմել է 69.763,0 հազար դրամ, իսկ 2018թ.-ին՝ 65.983,2 հազար դրամ (ընդամենը՝ 135.746,2 հազար դրամ), տարեկան ծրագրերի, ճշտված պլանների և դրամարկղային ծախսերի միջև 2017-2018թթ. տարբերություններ չեն առաջացել: Պետական բյուջեից ֆինանսավորվող օբյեկտների («Գորիսի տարածքային մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ և «Սիսանի մարզադպրոց» ՊՈԱԿ) 2017թ.-ի պետական բյուջեի փաստացի ծախսերը 5.439,3 հազար դրամով գերազանցել են դրամարկղային ծախսերին, իսկ 2018թ.-ին՝ 1.802,3 հազար դրամով:

Անհամապատասխանություններ կամ խեղաթյուրումներ

Մարզադպրոցներում 2017-2018թթ.-ի տարիֆիկացիոն ցուցակներում և աշխատավարձի տեղեկագրերում առկա են ուսումնական ծանրաբեռնվածության անհամապատասխանություններ:

Մինչև 2018 թվականի սեպտեմբեր ամիսը Սիսիանի մարզադպրոց ՊՈԱԿ-ում չի վարվել մանկապատանեկան մարզիկների անձնական գործերի հաշվառման մատյանը:

12.1 Մարզպետարանը շահառուների հետ կնքել է նվիրատվության պայմանագրեր: Առկա են անհամապատասխանություն ՀՀ կառավարության 2003թ-ի «ՀՀ պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգը հաստատելու մասին» թիվ 1937-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի 8-րդ կետի ա), բ), գ), դ), ե) և է) ենթակետերի և հավելվածի 3-րդ կետի պահանջներում:

12.2 Մարզպետարանի կողմից անհամապասխանություն է արձանագրվել ՀՀ կառավարության 2003թ-ի «ՀՀ պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգը հաստատելու մասին» թիվ 1937-Ն որոշման հավելվածի 8.1 կետով և ՀՀ ֆինանսների նախարարի 2010 թվականի մայիսի 18-ի «Հանձնման-ընդունման ակտի ձևը և դրա լրացման պահանջները հաստատելու մասին» թիվ 346-Ն հրամանով սահմանված ընդունման-հանձնման հաստատված ակտի ձևում: Միաժամանակ, Մարզպետարանը 25.12.2017թ.-ին և 25.12.2018թ.-ին ընդունման-հանձնման համապատասխան ակտերով ընդունել է մարզադպրոցների կողմից 2017-2018թ. կատարված արտադպրոցական դաստիարակության ծառայությունների մատուցման ամբողջական տարեկան աշխատանքների ծավալները՝ ընդամենը՝ 135.746.2 հազար դրամ, որից հաշվեքննությամբ պարզվեց, որ 6.865,0 հազար դրամի աշխատանքներ պակաս են կատարվել:

12.3 Մարզպետարանի կողմից հաստատված մարզադպրոցների տարեկան նախահաշիվները չեն համապատասխանում իրավական ակտերով սահմանված պահանջներին և չափորոշիչներին: Արդյունքում նախահաշիվների և ֆինանսական հաշվետվություններում առկա տեղեկատվության արժանահավատությունը և ճշգրտությունը անհնար է դառնում գնահատել, իսկ մնացորդները արձանագրվում են ՀՀ ֆինանսների նախարարի կողմից հաստատված իրավական ակտերի պայմաններին անհամապատասխան:

Առկա են անհամապատասխանություններ ՀՀ ֆինանսների նախարարի 2007 թվականի հուլիսի 23-ի «ՀՀ «Բյուջետային հիմնակի պահպանման ծախսերի», «Հիմնարկի կողմից բյուջետային հատկացումների հաշվին իրականացվող ծախսերի (ելքերի) առանձին տեսակների» նախահաշիվների օրինակելի ձևերը և դրանց լրացման պահանջները հաստատելու, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2000թ. ապրիլի 11-ի թիվ 49 և 2001 թ. փետրվարի 7-ի թիվ 34 հրամանները ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 597-Ն հրամանով սահմանված պահանջներում:

12.4 Մարզադպրոցներում 2017-2018թթ.-ի տարիֆիկացիոն ցուցակներում և աշխատավարձի տեղեկագրերում առկա են մարզիչ-մանկավարժների ուսումնա-մանկավարժական աշխատանքի (շաբաթական՝ 24 ժամ), ինչպես նաև վերջիններիս՝ աշխատանքային երկարամյա փուլերում շաբաթական ծանրաբեռնվածության (շաբաթական՝ 8-32 ժամ), սահմանված ժամաքանակների անհամապատասխանություններ, որոնք արտացոլված են նաև աշխատակիցների հետ կնքված աշխատանքային պայմանագրերում: Արդյունքում առկա են անհամապատասխանություններ ՀՀ Աշխատանքային օրենսգրքի թիվ 99, թիվ 139 հոդվածների, ինչպես նաև ՀՀ կառավարության 2015թ.-ի հուլիսի 16-ի ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվող մանկապատանեկան մարզադպրոցներում աշխատող մարզիչ-մանկավարժների և ղեկավար անձնակազմի պաշտոնական դրույքաչափերի, հավելավճարների և լրավճարների հաշվարկման և վճարման կարգը հաստատելու մասին թիվ 798-Ն որոշման հավելվածի 1-ի 15-րդ և 16-րդ կետերի պահանջներում:

12.5 Մարզադպրոցների 2017-2018թթ. ֆինանսական հաշվետվություններում բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման ծախսային մասի հոդվածները չեն համապատասխանում վերջինիս կողմից կատարված սկզբնական հաշվառման փաստաթղթերով կատարված ծախսային հոդվածներին (հոդված 486100 Այլ ծախսեր-ի մեջ ներառվել է նաև հոդված 422100 Ներքին գործուղումներ, հոդված 426100 Գրասենյակային նյութեր և հագուստ հոդվածի ծախսերը): Տարեկան նախահաշիվը կազմվել է Հրամանի պահանջներին անհամապատասխան: Առկա են անհամապատասխանություններ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007-ի հունվարի 9-ի ՀՀ բյուջետային և հանրային հատվածի հաշվապահական հաշվառման դասակարգումները և դրանց կիրառման ցուցումները հաստատելու մասին թիվ 5-Ն հրամանով սահմանված կանոնակարգերը, պահանջներում և նորմերում:

12.6 Մինչև 2018 թվականի սեպտեմբեր ամիսը Սիսիանի մարզադպրոց ՊՈԱԿ-ում չի վարվել մանկապատանեկան մարզիկների անձնական գործերի հաշվառման մատյանը: Արդյունքում առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 2005 թ.-ի սեպտեմբերի 1-ի Մանուկների և պատանիների՝ ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու համար անհրաժեշտ պայմանների նվազագույն չափորոշիչները հաստատելու մասին թիվ 1428-Ն որոշման հավելվածով սահմանված պահանջներում: Միաժամանակ, առկա են անհամապատասխանություններ նաև նույն որոշման 5-րդ կետի պահանջներում՝ մարզադպրոց ընդունվող երեխաների նվազագույն տարիքն՝ ըստ մարզաձևերի, ինչպես նաև 11-րդ կետի պահանջները՝ մասնագիտացված մարզակառույցներում տվյալ մարզաձևի մարզագույքից միաժամանակ օգտվող մարզիկների թիվը: Իսկ 2018-2019թթ. ուսումնական տարվա մարզիկների անձնական գործերի շարժի ուսումնասիրություններից պարզվեց, որ

Վոլեյբոլ մարզաձևում թվով 2 մարզիչների խմբերում թվով 13 մարզիկների ընդունելությունը ևս կատարվել է վերոնշյալ որոշման 5-րդ կետի անհամապատասխանությամբ:

Առաջարկվել է Մարզպետարանին մարզադպրոցների հետ կնքվող սուբսիդիայի պայմանագրերը, հաշվապահական հաշվառումը, ֆինանսական հաշվետվությունների կազմումը, սուբսիդիայի հատկացման կարգը և ընթացիկ գործունեությունը համապատասխանեցնել իրավական ակտերով սահմանված պահանջներին և պայմաններին:

13. Մարզպետարանի կողմից Գանձապետական թիվ 900005200432 «Բաժնետիրական կապիտալում կատարված ներդրումներից ստացված դիվիդենտներ» հաշվի մուտքեր հոդվածի կատարման վերաբերյալ

ՀՀ Սյունիքի մարզի թվով 7՝ «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ, «Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ, «Քաջարանի բժշկական կենտրոն» ՓԲԸ, «Մեղրիի տարածաշրջանային բժշկական կենտրոն» ՓԲԸ, «Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ, «Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» ՓԲԸ, «Սյունիքի մարզային արյան փոխներարկման կայան» ՓԲԸ (այսուհետ՝ Ընկերություններ), ընդգրկված են «Բաժնետիրական կապիտալում կատարված ներդրումներից ստացված դիվիդենտներ» հոդվածում որպես շահառուներ: 2017թ.-ին ֆինանսատնտեսական գործունեության արդյունքում ստացված պետական բաժնեմասին համապատասխանող զուտ շահույթից շահութաբաժինների գծով Ընկերությունները վճարումներ են կատարել 1.563,8 հազար դրամ, իսկ 2018թ.-ին՝ 5.656,4 հազար դրամ (2017-2018 թթ. համեմատությամբ մուտքերը ավելացել են 4.092,6 հազար դրամով):

Անհամապատասխանություններ կամ խեղաթյուրումներ

13.1 Հաշվեքննության ընթացքում պարզվեց, ՀՀ պետական բյուջեի մուտքերի «Շահաբաժիններ բաժնետիրական ընկերություններում պետական կամ համայնքային մասնակցությունից» եկամտային խմբում Մարզպետարանի թիվ 900005200432 գանձապետական հաշվին որպես «Բաժնետիրական կապիտալում կատարված ներդրումներից ստացված դիվիդենտներ», Ընկերությունների կողմից 2018թ. –ի փոխանցվել է 5.702,9 հազար դրամ, սակայն հաշվետվություններով, ՀՀ պետական բյուջեի եկամտային մասի շահութաբաժինների վճարումները Մարզպետարանի մասով կազմել են 5.656,4,0 հազար դրամ (տարբերությունը՝ + 46.0 հազար դրամ), իսկ 2019թ.-ին՝ համապատասխանաբար, 3.924,5 հազար դրամ ներկայացված գումարների պայմաններում շահութաբաժինների վճարումները Մարզպետարանի մասով կազմել են 3.925,8 հազար դրամ (տարբերությունը՝ - 0.8 հազար դրամ):

13.2 2017թ.-ին Ընկերությունների (բացառությամբ «Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» և «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ների) կողմից տարբեր հոդվածներով ՊԱԳ–ի կողմից կասեցված 24.867,3 հազար դրամ գումարը որպես ծախս չի ընդունվել: Չեն ընդունվել նաև ՊԱԳ–ի կողմից 2018թ.-ին նույն Ընկերությունների ներկայացված 22.860,5 հազար դրամ գումարը: Նշված գումարաչափերը, որպես լրացուցիչ

ծախսային բաղադրիչ ներառվել են իրենց ընդհանուր ծախսերում, որի հետևանքով հիշատակված գումարաչափերը ազդել են շահաբաժինների ծավալների վրա:

13.3 «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի նախորդ ժամանակահատվածից կուտակված վնասը առաջացել է վերջինիս ստեղծման և գրանցման պահից (առ 01,01,2017 թ. կազմել է 84.099,1 հազար դրամ, առ 01.01.2018թ. կազմել է 80.200,8 հազար դրամ, իսկ առ 01.01.2019 թ.ին՝ 84.965,1 հազար դրամ): 2007թ.-ին ՓԲԸ-ի հաշվապահական հաշվեկշռում արտացոլված 115.248.2 հազար դրամ գումարը ներառվել է սեփական կապիտալում՝ որպես «Այլ տարր», որն իր ծագման պահից անհայտ է և ազդում է ՓԲԸ-ի բիզնես գործունեության վրա: Մասնավորապես, 2017թ.-ին շահաբաժնի առկայության պայմաններում վերջինս ուղղվում է նախորդ տարիների վնասի մարմանը, իսկ 2018թ.-ի վնասով ավելացվում է նախորդ տարիներից կուտակված գումարի մեծությունը:

***Առաջարկել** Մարզպետարանին.*

1. Ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության գծով տարեկան կտրվածքներով իրականացնել համալիր և նպատակային ուսումնասիրություններ՝ պարզելու շահութաբաժինների գծով ներկայացվող հաշվարկների ճշտությունը, ինչպես նաև պարզաբանել գանձապետարան փոխանված փաստացի գումարաչափերի տարբերությունները:

2. ՀՀ ֆինանսների, առողջապահության և արդարադատության նախարարությունների հետ համատեղ քննարկել, հիմնավորել և առաջարկություն ներկայացնել ՀՀ կառավարություն, ըստ որի հնարավորության առոչինչ ճանաչելու, չեղարկելու կամ ներելու «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի 2007թ.-ից ֆիկսված և առայսօր էական փոփոխություններ չկրած նախորդ տարիներից կուտակված վնասը:

14. Մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի գործունեության վերաբերյալ

Հաշվեքննության ընթացքում ուսումնասիրվել է Մարզպետարանի և նրա ենթակայության կազմակերպություններում ներքին աուդիտի կատարած աշխատանքները: Դիտարկվել են Մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի կողմից հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանի վերաբերյալ իրականացրած վերահսկողության, հսկողության, ստուգումների, ներքին աուդիտի տարեկան ծրագրերը, կազմված եզրակացություններն ու ներկայացված արդյունքները: Ստորաբաժանման՝ պետական և համայնքային բյուջեների օրինականության ու տնտեսման, նպատակային և ծախսային արդյունավետության ուղղությամբ կատարած աշխատանքներն ու ստացված արդունքները թույլ են տալիս եզրակացնել, որ 2017–2018թթ. Մարզպետարանի ներքին աուդիտի գործունեությունը գնահատվում է թերի:

15. «Այլ տեղեկատվություն»

(Աղյուսակ 2)

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՆՁԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

(հազար ՀՀ դրամ)

Ծ ր ա գ ի ր	Տարեկան ճշտված պլան	Փաստ	Փաստացի ծախս
ԸՆԴԱՄԵՆԸ	4,266,076.4	5,855,900.8	5,840,899.7
1. Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում *(01010103)*	515,948.3	515,948.3	513,708.2
2. Մարզային նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանում, ընթացի կպահպանում և շահագործում *(04050104)*	138,360.0	138,360.0	138,360.0
3. Թատերական ներկայացումներ *(08020509)*	72,043.0	72,043.0	72,043.0
4. Հանրակրթական ուսուցում / Տարրական ընդհանուր կրթություն *(09010201)*	1,642,614,0	1,642,614.0	1,635,949.7
5. Հանրակրթական ուսուցում / Հիմնական ընդհանուր կրթություն *(09010202)*	2,262,032.3	2,262,032.3	2,253,112.5
6. Հանրակրթական ուսուցում / Միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն *(09010202)*	575,372.9	575,372.6	573,584.4
7. ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ *(11010101)*	353,249.6	344,281.4	343,453.8
8. Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում *(10090202)*	238,230.0	194,408.5	194,408.5
9. Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, փողային և լարային նվագարանների գծով ուսուցում *(09050105)*	41,077.3	41,077.3	41,077.3
10. Արտադպրոցական կրթություն *(09050102)*	69,763.0	69,763.0	75,202.3

(Աղյուսակ 3)

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

(հազար ՀՀ դրամ)

Ծ ր ա գ ի ր	Տարեկան ճշտված պլան	Փաստ	Փաստացի ծախս
ԸՆԴԱՄԵՆԸ	5,795,584.7	5,719,207.4	5,752,791.9
1. Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում *(01010103)*	542,472.1	512,608.9	512,935.7
2. Մարզային նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանում, ընթացի կպահպանում և շահագործում *(04050104)*	161,010.0	161,010.0	161,010.0
3. Թատերական ներկայացումներ *(08020509)*	69,306.1	69,306.1	69,306.1
4. Հանրակրթական ուսուցում / Տարրական ընդհանուր կրթություն *(09010201)*	1,595,943.9	1,595,943.4	1,607,564.6
5. Հանրակրթական ուսուցում / Հիմնական ընդհանուր կրթություն *(09010202)*	2,229,105.2	2,229,105.2	2,245,239.4
6. Հանրակրթական ուսուցում / Միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն *(09010202)*	601,849.4	601,849.4	606,523.6
7. ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ *(11010101)*	253,998.9	253,639.9	254,467.9

8. Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում *(10090202)*	**239,976.0**	**193,821.4**	**193,821.4**
9. Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, փողային և լարային նվագարանների գծով ուսուցում *(09050105)*	**35,939.9**	**35,939.9**	**35,939.9**
10. Արտադպրոցական կրթություն *(09050102)*	**65,983.2**	**65,983.2**	**65,983.2**

15.1 Հաշվեքննությամբ պարզվել է, որ «Սյունիքի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի հաշվապահական հաշվառման հաշվեկշռում որպես հիմնական միջոցներ հաշվառված են հիմնական մասնաշենքից 7 կմ հեռավորության վրա գտնվող Բարգուշատ բնակավայրի դպրոցական շենքը՝ 11.944,8 հազար դրամ գնահատված արժեքով և 5 կմ հեռավորությամբ գտնվող՝ Դիցամայր բնակավայրի դպրոցական շենքը 1.870,9 հազար դրամ գնահատված արժեքով: Հիշյալ շինությունները ի պահ են հանձնված ՊՈԱԿ-ին՝ առանց պահպանման ծախսերի հատկացման, դրանք չեն օգտագործվում դպրոցի կողմից, ենթակա չեն վարձակալության հանձնման, հետագա շահագործման և կառավարման տեսակետից անարդյունավետ է կցել ՊՈԱԿ-ին՝ պատասխանատվության և պարտականությունների ստանձման առումով:

Առաջարկվել է *ՀՀ պետական գույքի կառավարման կոմիտեի հետ լուծել «Սյունիքի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի հաշվեկշռում հաշվառված երկու մասնաշենքերի նպատակային նշանակության և հետագա շահագործման հետ կապված հարցերը:*

Հաշվեքննիչ պալատի կողմից արձանագրված թվով 60 անհամապատասխանություններից և խեղաթյուրումներից Մարզպետարանը թվով 50–ի վերաբերյալ առարկություններ չի ներկայացրել: Հաշվեքննության օբյեկտը արձագանքել է թվով 10 անհամապատասխանությունների և խեղաթյուրումների՝ առարկությունների, բացատրությունների և պարզաբանումների տեսքով: Դրանք վերաբերում են սույն եզրակացության 4-րդ (թվով երեք՝ *4.2.2, 4.2.3 և 4.2.4 կետեր*), 6-րդ (թվով մեկ՝ *6.1 կետ*), 7-րդ (թվով երեք՝ *7.1, 7.2 և 7.6 կետեր*), 10-րդ (թվով երկու՝ *10.4 և 10.5 կետեր*) և 11-րդ (թվով մեկ՝ *11.3 կետ*) գլուխներին:

Ներկայացված արձագանքներից հաշվեքննիչ պալատը կողմից սույն եզրակացության 6-րդ (թվով 1՝ *6.1 կետ*) և 7-րդ (թվով 3՝ *7.1, 7.2 և 7.6 կետեր*) գլուխների վերաբերյալ թվով 4 առարկությունները չեն ընդունվել (Տես Հավելված 2): Սույն եզրակացության 4-րդ (3 արձագանքներ՝ *4.2.2, 4.2.3 և 4.2.4 կետեր*), 10-րդ (թվով երկու արձագանքներ՝ *10.4 և 10.5 կետեր*) և 11-րդ (թվով 1 արձագանք՝ *11.3 կետ*) գլուխների վերաբերյալ թվով 6 արձագանքներում Մարզպետարանը առարկություններ չի ներկայացրել, տրվել են միայն բացատրություններ և պարզաբանումներ (Տես՝ Հավելված 1 և Հավելված 2):

(Կից ներկայացվում է ՀՀ Սյունիքի մարզպետարանի հաշվեքննության արձանագրությունների վերաբերյալ պատասխան գրությունը՝ 12 էջ):

Համաձայն «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջի՝ ընթացիկ եզրակացությունը ստանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում ՀՀ

հաշվեքննիչ պալատին տրամադրել ընթացիկ եզրակացությունում ամրագրված անհամապատասխանության, խեղաթյուրման վերացման, առաջարկությունների իրականացման և ընթացիկ եզրակացության վերաբերյալ այլ գրավոր տեղեկատվություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Սյունիքի մարզ, 3301, ք.Կապան, Գ.Նժդեհի 1, Հեռ.՝ +374 60 517822, +374 28544291, Էլ.փոստ՝ syunik@mta.gov.am

« » 2020թ., №

Ձեր՝ «04» փետրվար 2020թ., № ՀՊԵ-ԳՈ-10

ՀՀ Հաշվեքննիչ պալատի
անդամ Գ. Ոսկանյանին

Հարգելի պարոն Ոսկանյան

Ի պատասխան Ձեր գրության՝ ներկայացնում ենք ՀՀ Սյունիքի մարզպետարանում իրականացված հաշվեքննության վերաբերյալ մեր առարկություններն ու բացատրությունները:

Առդիր՝ էլեկտրոնային նյութ:

14.02.2020

X

ՀՈՒՆԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Подписано: POGHOSYAN HUNAN 4005640117

Հարգանքով՝ **Հ. Պողոսյան**

Կատարող՝ Է. Սարտիրոսյան
Հեռ.՝ (0285) 44292
Էլ-հասցե՝ syunik.tsragrer@mta.gov.am

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ հաշվեքննիչպալատի 2019 թվականիհոկտեմբերի 14-ի թիվ 22/6 որոշմամբհաստատվածառաջադրանքով, 2019թվականիդեկտեմբերի 04-ի թիվ 26/2 և 2020 թվականիհունվարի 22-ի թիվ 5 - Ա որոշումներով՝ ՀՀ Սյունիքիմարզպետարանիկողմիցպետականբյուջեիմուտքերիձևավորման և ելքերիիրականացմանկանոնակարգվածգործունեության,հաշվեքննությանԱՐՁԱՆԱ ԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1–ի առարկությունների և բացատրություններիմասին

1.1 Ծրագիր-Ծածկագիր՝ 01010103, «Գործադիրիշխանության, պետականկառավարմանհանրապետական և տարածքայինկառավարմանմարմիններիպահպանում»

1.1.6Բացատրություն

Որևէ իրավական ակտով չի կանոնակարգվում 472900 «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված դրամական օգնությունների տրամադրման կարգը և տրամադրման գործընթացը:

Ցանկ 1-ի և ցանկ 2-ի վերաբերյալ պարզաբանումները ներկայացվում է նշված ցանկերի նշումներ սյունակներում(կից՝ ցանկ 1 և 2):

Մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության կողմից առանց անհատական դիմումների օգնության ցուցակներում քաղաքացիներին ընդգրկել են միայն այն դեպքում, երբ առկա է եղել մարզպետարանի ստորաբաժանումների ղեկավարների կողմից մարզպետին ներկայացված զեկուցագրի և զեկուցագրին կցված ցուցակները: Զեկուցագրի վրա արված համապատասխան մակագրությունը հիմք է հանդիսացել նշված քաղաքացիներն ընդգրկելու դրամական օգնության ցուցակներում: Որպես օրինակ ներկայացվում է մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետի 02.06.2017թ. զեկուցագիրը և

զեկուցագրին կցված ցուցակը (առդիր 3 թերթ): Ցուցակում ընդգրկված շահառուի տվյալները փոխելու փաստ ներկայացված չէ:

1.1.6"2Բացատրություն

Նշված է, որ թվով 37 դեպքով դրամական օգնություն է հատկացվել մարզում հաշվառում չունեցող անձանց:

Ձեզ ենք ներկայացնում 37 քաղաքացիների դիմումները և նրանց հաշվառման և ապրելու վերաբերյալ մեր ուսումնասիրության արդյունքները:Առդիր դիմումներ և տեղեկանք տեղեկատվությունների մասին:

1.1.6.3 Բացատրություն մարզպետարանի աշխատակիցների գրանցման թվով 29 հասցեներում հաշվառված դրամական օգնություն ստացած անձանց վերաբերյալ ներկայացվում է համառոտ բացատրություն յուրաքանչյուրի մասով՝ առդիր 2 թերթ

1.2 Ծրագիր-Ծածկագիր՝ 04050104, «Մարզային նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանում, ընթացիկ պահպանում և շահագործում», ընթացիկ սուբվենցիաներ համայնքներին՝ 463200

1.2.2 Առարկություն

ՀՀ կառավարության 2010թ. նոյեմբերի 4-ի N 1419-Ն որոշման(2011 թվականի փետրվարի 17-ի N 112-Ն որոշմամբ կայացված փոփոխություններով)հավելվածի կետ 33 1) ենթակետի պահանջը՝ կապալառուի կողմից ձև 8-ում բերված յուրաքանչյուր ժամանակաշրջանի համար լրացվում են սպասարկման ենթակա ճանապարհահատվածների ամբողջ ցանցի «ԳԱՐՈՒՆ-ԱՄԱՌ-ԱՇՈՒՆ» և «ՁՄԵՌ» ժամանակաշրջանների պահպանման աշխատանքների համար կատարվող ծախսերը և հաշվարկվում են սպասարկվող ճանապարհահատվածների պահպանության արժեքները, որն օգտագործվում է միայն մրցույթերին հաղթող որոշելու նպատակով.

Կապալառուի կողմից ձև 8-ում ներկայացված են սպասարկման ենթակա «ԳԱՐՈՒՆ-ԱՄԱՌ-ԱՇՈՒՆ» ժամանակաշրջանի միայն «բավարար» վիճակում

գտնվող սպասարկվող ճանապարհահատվածների պահպանման աշխատանքների համար կատարվող ծախսերը: Կապալառուի կողմից ձև 8-ում նաև պետք է ներառվեին սպասարկման ենթակա ճանապարհահատվածների ամբողջ ցանցի՝ սպասարկվող ճանապարհահատվածների ցանկում ընգրկված «լավ», «երաշխիքային» (համապատասխան սպասարկման մակարդակներով «լավ», «միջին», «երաշխիքային») վիճակում գտնվող սպասարկվող ճանապարհահատվածների պահպանման աշխատանքների համար կատարվող ծախսերը, որն կօգտագործվեր միայն մրցույթերին հաղթող որոշելու նպատակով.

Քանի, որ մրցույթին ըստ չափաբաժինների, ներկայացված էր 1-ական մասնակցի հայտ՝ որոշման կետ 33 1) ենթակետով պահանջվող Ձև 8-ի հաշվարկները չէին կարող որևիցե նշանակություն ունենալ հաղթողներին որոշելու հարցում:

Կապալառուն հաշվարկել է սպասարկման ենթակա ճանապարհահատվածների «ԳԱՐՈՒՆ-ԱՄԱՌ-ԱՇՈՒՆ» և «ՁՄԵՌ» ժամանակաշրջանների պահպանության արժեքները, որից պարզվել են 1 կմ ճանապարհի ընթացիկ ամառային և ձմեռային պահպանման գները:

Ի տարբերություն միջպետական նշանակության ճանապարհների, որոնք ֆինանսավորվում և պահպանվում են սպասարկման ենթակա ճանապարհահատվածների ամբողջ ցանցի «ԳԱՐՈՒՆ-ԱՄԱՌ-ԱՇՈՒՆ» և «ՁՄԵՌ» ժամանակաշրջանների պահպանմանաշխատանքների համար, ապա մազային նշանակության ճանապարհների սպասարկումը իրականացվում է պահպանման ենթակա ճանապարհահատվածների ամբողջ ցանցի մի մասի համար կախված ֆինանսների սղության հետ: Այն ճանապարհահատվածները, որոնք չեն ընդգրկվել պահպանման ենթակա ճանապարհահտվածների ցանկում, տարիներ շարունակ չեն վերանորոգվել, չեն պահպանվել ու կանխատեսել, որ այդ ճանապարհահատվածների պահպանումը հետագայում կֆինանսավորվի կամ ֆինանսական միջոցների առկայության պահին նշված ճանապարհահատվածների

կարգավիճակը փոփոխության չի ենթարկվի (կարող է դառնալ վատ) հնարավոր չէ կանխատեսել:

Եթե 2016-2020թթ <<Վատ>> գնահատված ճանապարահատվածները վերանորոգվում են, բնականաբար դրանք կսպասարկվեն: (Համաշխարհային բանկի միջոցներով 2018-2019թթ. իրականացվել են ա/ճ Մ-2 Վաղատին - Շենաթաղ կմ 0 + 000 - կմ 13 + 760 հատվածի վերականգում):

Բացի այդ մեր կողմից հաշվի է առնված այն կարևորագույն փաստը, որ բյուջեից ընթացիկ պահպանման համար հատկացվում է մի քանի անգամ քիչ գումար:

Վերը նշված խնդիրը կարգավորվել է ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի << Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի նոյեմբերի 4-ի N 1419-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին>> N 1925-Ն որոշմամբ (հաստատված հավելվածը շարադրվել է նոր խմբագրությամբ, մասնավորապես բացակայում է կետ 33 1) ենթակետը):

Միաժանակ տեղեկացվում է , որ ՀՀ Սյունիքիմարզիընդհանուր օգտագործման ավտոմոբիլային մարզային նշանակության ճանապարհային ցանցի երկարությունը կազմում է 515.2 կմ,այդ թվում՝ այդ թվում՝

Սիսիանի տարածաշրջան՝ 147.0կմ, որից ճանապարհներիառկա վիճակի գնահատման՝պահպանման ենթակա (տեղական լավ, բավարար) ճանապարհահատվածների երկարությունը կազմում է 31.99կմ

Կապանի տարածաշրջան՝ 173.2 կմ, որից ճանապարհներիառկա վիճակի գնահատման՝ պահպանման ենթակա (տեղական լավ, բավարար) ճանապարհահատվածների երկարությունը կազմում է 41.5կմ

Գորիսի տարածաշրջան՝ 146.7կմ, որից որից ճանապարհներիառկա վիճակի գնահատման՝ պահպանման ենթակա (տեղական լավ, բավարար) ճանապարհահատվածների երկարությունը կազմում է 20.765 կմ

Մեղրիի տարածաշրջան՝ 49.2 կմ, որից որից ճանապարհներիառկա վիճակի գնահատման՝ տեղական լավ, բավարար ճանապարհահատվածների

երկարությունը կազմում է 49.2կմ (2019թ. սպասարկվել է 41.7կմ, 7.5կմ գնահատվել է վատ վիճակ):

Նաև տեղեկացվում է, որ «Ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների պետական կառավարման մարմին սահմանելու, ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների անվանացանկը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի ապրիլի 14-ի N 475-Ն և 1997 թվականի հոկտեմբերի 16-ի N 445 որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 112-Ն (2-ոդկետըփոփ . 29 . 03 . 19 N 383-Ն , 06(փոփ . 29 . 03 . 19N383-Ն , 06 .06 . 19 N733-Ն. 06 . 19 N7 33-Ն) որոշմանհամաձայն ՀՀ Սյունիքիմարզիընդհանուր օգտագործման ավտոմոբիլային մարզային նշանակության ճանապարհային ցանցի երկարությունը կազմում է 499.70 կմ, այդ թվում՝ (Հավելված 1) Սիսիանի տարածաշրջան՝ 145.9 կմ, Կապանի տարածաշրջան՝ 196.2 կմ Գորիսի տարածաշրջան՝ 92.3կմ, Մեղրիի տարածաշրջան՝ 65.3կմ(ցանկից գոյություն չունեցող ճանապարհներ,ներառված են նախկին հանրապետական նշանակության որոշ ճանապարհահատվածներ):

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ հաշվեքննիչպալատի 2019 թվականիհոկտեմբերի 14-ի թիվ 22/6 որոշմամբհաստատվածառաջադրանքով, 2019թվականիդեկտեմբերի 04-ի թիվ 26/2 և 2020 թվականիհունվարի 22-ի թիվ 5 - Ա որոշումներով՝ ՀՀ Սյունիքիմարզպետարանիկողմիցպետականբյուջեիմուտքերիձևավորման և ելքերիիրականացմանկանոնակարգվածգործունեության,հաշվեքննությանԱՐՁԱՆԱ ԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2–ի առարկությունների և բացատրություններիմասին

2.1 Ծրագիր «Հանրակրթական ծրագիր», Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետականկազմակերպություններին 451100

2.1.1.1 Առարկություն Դպրոցի հաշվապահը ոչ թե վարչական աշխատող է, այլ ուսումնաօժանդակ, հետևաբար «Ագարակի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ հաշվապահի կողմից 14 ժամ ֆիզիկա առարկայի դասավանդումը չի հակասում «Հանրակրթության մասին» օրենքի 25-րդ հոդվածի 4-րդ կետին:

Բացատրություն. «Կապանի թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ փոխտնօրենին հատկացվել է 8 ժամ, իսկ դպրոցում այլ մասնագետ չլինելու պատճառով 4 ժամը դասավանդվել է ժամավճարային հիմունքներով մինչև համապատասխան մասնագետի առկայությունը:

2.1.1.2 Բացատրություն. թերությունը արձանագրվել է Սյունիքի մարզպետարանի ներքին աուդիտի կողմից իրականացված աուդիտորական ուսումնասիրության արդյունքում, տնօրենը ենթարկվել է կարգապահական տույժի (Սյունիքի մարզպետի 30.01.2019թ. N 14-Ա կարգադրություն)

2.1.1.3 Առարկություն. Մինչ դպրոցի ապամոնտաժումը, դպրոցում գործել է 2 լաբորատորիա՝ ֆիզիկայի և քիմիա-կենսաբանության: Դպրոցի ապամոնտաժումից հետո, 2016թ. սեպտեմբերից դասապրոցեսը իրականացվել է 3 ուսումնական հաստատություններում՝ թիվ 6 հ/դպրոցի, Եվրոպական քոլեջի և

Գյուղհամալսարանի մասնաշենքերում: Լաբորատորիաների համար ազատ կաբինետներ չկար, սակայն լաբորատոր գույքը տեղադրվեց դասասենյակներում և աշակերտական խորհրդի սենյակում: Ֆիզիկա, քիմիա և կենսաբանություն առարկաների թեմաների հետ կապված լաբորանտները լաբորատոր գույքը տեղափոխում են մասնաշենքից մասնաշենք փորձեր անելու կամ դիտարկելու համար: Առկա է նրանց թղթապանակը, փորձերի գրանցամատյանը:

2.1.1.4Բացատրություն. Բարգուշատ բնակավայրի դպրոցական շենքը և Դիցամայր բնակավայրի դպրոցական շենքը, համաձայն ՀՀ կառավարության 2006 թվականի հունվարի 26-ի թիվ 346-Ն որոշման հանձնվել են ՀՀ պետական գույքի կառավարման կոմիտեի տնօրինմանը: Հաշվի առնելով, որ շենքերը Սյունիքի միջնակարգ դպրոցի կողմից փաստացի չի օգտագործվում, անհատույց օգտագործման պայմանագրեր չեն կնքվել:

2.1.1.9 Առարկություն. 2018-2019 ուս.տարում 2 աշակերտ հանվել են հաշվառումից 04.09.2018թ. (տնօրենի հրաման NN24,25) և տեղափոխվել ԼՂՀ -ի Ճանկաթաղի միջնակարգ դպրոց՝ ՀՀ «Հանրակրթության մասին» օրենքի հոդված 16-ի 8-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն: Ֆինանսավորումը տրամադրվել է ՀՀ կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 28-ի N1717-Ն որոշման 6-րդ կետի 2-րդ մասով սահմանված դրույթներին համաձայն՝ «2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ և 2018/2019 ուսումնական տարվա սկզբում դասարանների փաստացի կոմպլեկտավորման արդյունքում»:

2.1.1.10 Առարկություն. 2018 թվականի սեպտեմբերի մեկի դրությամբ աշակերտների թիվը 250 է: Աշակերտները սեպտեմբերի 3-ին տեղափոխվել են Իշխանասարի հիմնական դպրոց: Կրկնակի ֆինանսավորում չի եղել: Ֆինանսավորումը տրամադրվել է ՀՀ կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 28-ի N1717-Ն որոշման 6-րդ կետի 2-րդ մասով սահմանված դրույթներին համաձայն՝ «2018թվականի հունվարի 1-ի դրությամբ և 2018/2019 ուսումնական տարվասկզբում դասարանների փաստացի կոմպլեկտավորման արդյունքում»:

2.2 Ծրագիր-Ծածկագիր՝ 09050105, «Կառավարության պահուստային ֆոնդ», Ընթացիկ սուբվենցիաներ համայնքներին՝ 463200

2.2.4Բացատրություն. Մարզպետարանը 21.12.2018թ.-ին ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի հետ կնքել է «Սուբվենցիա տրամադրելու մասին» թիվ ՍՄԱՀ-13 պայմանագիրը (ավարտը՝ 28.12.2018թ.), որի առարկան Սիսիանի համայնքի ավազե խաղահրապարակների կառուցումն է՝ «Կապիտալ սուբվենցիաներ համայնքներին» հոդվածով՝ 18316.4 հազար դրամ: 17.12.2018 թվականի դրությամբ կապալառուի կողմից ներկայացված կատարողական ակտերի հանրագումարը կազմում է 45791.1 հազար դրամ, ինչի 40 տոկոսը կամ 18316.4 հազար դրամը ՀՀ կառավարության համաֆինանսավորումն է՝ համաձայն ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի N 1708-Ն որոշման՝ տվյալ ժամանակահատվածի իրավակարգավորումների: Հետևաբար մինչև սուբվենցիոն պայմանագրի ավարտը կատարողական ակտերով հիմնավորված է սուբվենցիայի պայմանագրում նշված գումարը: Կատարողական ակտերի լուսապատճենները կցվում են:

2.2.5Բացատրություն. «Կապանի ՃՇՇ»-ի և ՀՀ Սյունիքի մարզի Քաջարանի համայնքապետարանի միջև 19.07.2018թ.-ին կնքված թիվ ՍՄՔՀ-ԳՀԱՇՁԲ 18/07՝ «Քաջարանի քաղաքի Գայի փողոցի հիմնանորոգման և բարեկարգման աշխատանքների պայմանագրի 5.1 կետում նշված է, որ պայմանագրի ընդհանուր գումարը կազմում է 33.115.2 հազար դրամ, իսկ 5.1.2 կետում՝ «Պայմանագրի 5.1 կետում նշված ընդհանուր գումարի 61.2 տոկոսը պատվիրատուն վճարում է սեփական միջոցների հաշվին, իսկ 38.8 տոկոսը՝ պետության տրամադրած ֆինանսական հատկացումների հաշվին»: 5.1 կետում նշված գումարի 38.8 տոկոսը կազմում է 12848.7 հազար դրամ: Հետևաբար՝

1. «Կապանի ՃՇՇ»-ի և ՀՀ Սյունիքի մարզի Քաջարանի համայնքապետարանի միջև 19.07.2018թ.-ին կնքված թիվ ՍՄՔՀ-ԳՀԱՇՁԲ 18/07 պայմանագրի աշխատանքները և պետության համաֆինանսավորման գումարը և,

2. մարզպետարանի և ՀՀ Սյունիքի մարզի Քաջարան համայնքի հետ 04.12.2018թ.-ին կնքված «Սուբվենցիա տրամադրելու մասին» թիվ ՍՄԱՀ-10 պայմանագիրի մաս կազմող Քաջարան քաղաքի Գայի փողոցի բարեկարգման աշխատանքները և համաֆինանսավորման գումարը (12848.7 հազար դրամ),

նույնն են և վերաբերում են միևնույն աշխատանքին և համայնքը ի սկզբանե պլանավորել է աշխատանքները իրականացնել պետության համաֆինանսավորմամբ:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ հաշվեքննիչ պալատի 2019 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 22/6 որոշմամբ հաստատված առաջադրանքով, 2019թվականի դեկտեմբերի 04-ի թիվ 26/2 և 2020 թվականի հունվարի 22-ի թիվ 5 - Ա որոշումներով՝ ՀՀ Սյունիքիմարզպետարանի կողմից պետական բյուջեի մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեության,հաշվեքննությանԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ **3–ի** բացատրությունների մասին

3.1 Ծրագիր-Ծածկագիր՝ 09050105, «Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, փողային և լարային նվագարանների գծով ուսուցում», Ընթացիկ սուբվենցիաներ համայնքներին 463200

3.1.7 Բացատրություն

Հայաստանի Հանրապետության Հաշվեքննիչ պալատի կողմից 2019 թվականի նոյեմբերի 5-ից դեկտեմբերի 6-ն ընկած ժամանակահատվածում Կապան համայնքի ենթակայության «Արամ Խաչատրյանի անվան թիվ 1 երաժշտական դպրոց», «Թիվ 2 երաժշտական դպրոց», «Թիվ 3 երաժշտական դպրոց» և «Կապաի արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպություններում իրականացվել է պետական բյուջեից ֆինանսավորված միջոցների ծախսման՝ սահմանված չափանիշների և պահանջների պահպանման ստուգում, որի արդյունքում կազմվել են արձանագրություններ:

Այդուհանդերձ, ՀՈԱԿ-ներին տրամադրված արձանագրությունների վերաբերյալ հայտնում ենք հետևյալը.

Պետական բյուջեից համայնքներին տրվող սուբվենցիաները ՀՈԱԿ-ներին տրամադրվել և նրանց կողմից ծախսվել են նպատակային՝ ինչի վերաբերյալ նախապես տրված «Հաշվետվություն ձև 1»-ով ՀՈԱԿ-ների կողմից մարզպետարան են ներկայացվել հաշվետվություններ:

Հարկ է նշել, որ համայնքային ենթակայության նշված ՀՈԱԿ-ներում 2017, 2018թթ ազգային, փողային և լարային նվագարաններ բաժիններում սովորում էր 171 երեխա, որոնցից պետական բյուջեից փոխհատուցվել է 65-ը: Մնացած 106 երեխայի համար համայնքի կողմից ՀՈԱԿ-ներին հատկացվել է սուբսիդիա:

Համայնքի կողմից ՀՈԱԿ-ներին ընթացիկ տարվա սուբսիդիաները նախատեսվում են համայնքի ավագանու կողմից հաստատված դրույքաչափերի, կանխատեսումների, նախորդ տարվա փաստացի ծախսերի հիման վրա, իսկ ֆինանսավորումը կատարվում է ՀՈԱԿ-ի կողմից ներկայացված ծախսերը հիմնավորող փաստաթղթերով, վճարման հայտի հիման վրա: Կատարված ծախսերի վերաբերյալ ՀՈԱԿ-ները եռամսյակային կտրվածքով ներակայացնում են հաշվետվություն՝ ըստ տնտեսագիտական հոդվածների: Կատարված ծախսերը յուրաքանչյուր ՀՈԱԿ-ի համար և ըստ ամիսների կարող են նվազել կամ ավելանալ կախված տարբեր հիմնավորումներից՝ սովորողների թվից, կոմունալ ծախսերից՝ գազ, էներգիա և այլն:

ՀՈԱԿ-ների հաշվապահական հաշվառման մնացած այլ ծախսային հոդվածներում (կոմունալ, ընթացիկ վերանորոգումներ, գույքի ձեռքբերումներ և այլ ծախսեր/ պետական բյուջեից սուբվենցիոն միջոցների ֆինանսավորման կտրվածքով հաշվարկները փաստացի չէին կարող առանձնացվելև դրանք կարող են լինել մոտավոր՝ տեսակարար կշռով պայմանավորված:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ՈՐՈՇՈՒՄ

«28» փետրվարի 2020 թվականի N 22-Կ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄՈՒՏՔԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԵԼՔԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հաշվեքննիչ պալատի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 9-րդ մասի 5-րդ կետով՝ Հաշվեքննիչ պալատը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի կողմից պետական բյուջեի մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեության հաշվեքննության արդյունքների վերաբերյալ ընթացիկ եզրակացությունը՝ համաձայն հավելվածի:

ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀ Լ. ՅՈԼՅԱՆ